

ՀԱՅԿԱԿԱՆ ԶԻՆԱՆՇԱՆՆԵՐ ԱՐՏԱՇԷՍԵԱՆՆԵՐ, ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐ ԶԱՐԳԱՑԱԾ ԱԻԱՏԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Զինանշանների ուսումնասիրութիւնը պատմագիտութեան կարեւոր խնդիրներից է, քանի որ զինանշանագիտութիւնը նախ եւ առաջ օժանդակ պատմական գիտաճիւղ է: Զինանշանների պատմագիտական քննութեան արդիւնք է 1994 թ. հրատարակած մեր աշխատութիւնը «Հայկական զինանշաններ» (մաս Ա.), որի խնդիրն է եղել որոշել երեք հայ ազնուականական տոհմերի՝ Բագրատունիների, Զաքարեանների եւ Մամիկոնեանների զինանշանները եւ Թ-ԺԳ. դդ. Հայաստանի պետական խորհրդանշանները:

Տարիներ շարունակ ուսումնասիրել ենք Բագրատունեաց Հայաստանի ներքաղաքական յարաբերութիւնները, ուստի մեզ զբաղեցնում էր Բագրատունիների, ապա ԺԲ-ԺԳ. դդ. նրանց յաջորդած (եւ մեր համոզմամբ նրանց տոհմակից) Զաքարեանների, երկուսի հետ կապուած Մամիկոնեան տան զինանշանները: Նրանցից միայն մէկն է, որ ասպարէզ է մտնում ԺԲ. դ. սկսած, իսկ միւս երկուսը հնագոյն ազնուական տոհմերից են եւ բնական է, որ նրանց զինանշանները ունեն խոր արմատներ, որոնք սկիզբ են առնում վաղ միջնադարում կամ աւելի շուտ: Այդ պատճառով ստիպուած ենք եղել Բագրատունիների եւ Մամիկոնեանների խորհրդանիշերի քննութիւնը սկսել Դ-Ե. դդ. պատկերաքանդակներից:

Այդ տեսակէտից Արշակունիների զինանշանների ուսումնասիրութիւնը, որը կատարուում է մեր այս երկրորդ գործում, հետապնդում է երկու նպատակ. նախ պարզել Արշակունեաց տոհմի զինանշանը եւ նրանց պետական խորհրդանիշերը: Երկրորդ գտնել նախարարական մի քանի տոհմերի, այդ թւում Մամիկոնեանների եւ Բագրատունիների զինանշանների ակունքները, այսինքն շա-

րուենակել սկսած աշխատանքը:

Միաժամանակ պէտք է յստակեցնել մի պարագայ՝ ներկայ աշխատութիւնում մենք անդրադառնում ենք վաղ միջնադարի միայն այն տոհմերի նշաններին, որոնց նշանները ներկայ են Աղցի Արշակունեաց արքայական դամբարանում եւ նրա հետ կապուած Քասախի Դ. դ. բազիլիկայի քանդակներում: Ծարադրանքի համապատասխան բաժնում կ'երեւայ որ այդ նշանները կրող աւատապետական տները գոյատեւել են նաեւ յետագայում՝ Բագրատունիների, իսկ ոմանք նոյնիսկ Ջաքարեանների օրօք:

Ինչ վերաբերում է Արշակունեաց Հայաստանի միւս ազնուական տոհմերի զինանշաններին, ապա իր ամբողջութեան մէջ դա շատ ծաւալուն հիմնահարց է եւ պահանջում է յատուկ եւ երկարատեւ հետազօտութիւն:

Սակայն, միւս կողմից, Արշակունեաց Հայաստանի ազնուական խորհրդանշանները շատ բան են ժառանգել նախորդ հելլենիստական դարաշրջանի զինանշաններից:

Արտաշէսեան Հայաստանի զինանշանները որքանով տարօրինակ է, ցարդ չեն ուսումնասիրուած: Որպէս զինանշան մատնանշում է միայն Տիգրան Մեծի թագի պատկերը՝ զոյգ արծիւներ եւ արեւի նշան, իսկ որոշ ուսումնասիրողներ նոյնիսկ այդ պատկերը չեն համարել զինանշան (այդ մասին կ'ստուի շարադրանքում): Բայց Արտաշէսեանների նշանները շատ աւելի բազմատեսակ են եւ արտացոտաւորուած են նրանց կտրած տրամագծի վրայ քարէ կնիքներում եւ հնալուած են նրանց կտրած տրամագծի վրայ քարէ կնիքներում եւ հնալուած են նրանց կտրած տրամագծի վրայ քարէ կնիքներում եւ հնալուած են նրանց կտրած տրամագծի վրայ քարէ կնիքներում: Արտաշէսեան շրջանի զինանշաններից մի քանիսը կրկնուում են Արշակունիների Աղցի դամբարանում:

Սոյն մենագրութեան առաջին բաժնում քննուում ենք Արտաշէսեանների զինանշանները երկու դրդապատճառով նախ վաղուց հաւանաբանել է հին շրջանի զինանշաններ կայացնելու խնդիրը (ինչպէս առանձին ազնուական տոհմերի, այնպէս էլ պետական):

Երկրորդ. գրաւոր աղբիւրների տուեալները եւ Արշակունեաց շրջանի զինանշանները վիպայում են, որ հին շրջանի ազնուական տոհմերից շատերը գոյատեւել են վաղ միջնադարում եւ պահպանել իրենց զինանշանները: Ընդ որում պէտք է հաշուի առնել մի կարեւոր հանգամանք: Նոյն տոհմի զինանշանը Արտաշէսեան շրջանում եւ աւելի ուշ՝ քրիստոնէութեան շրջանում կարող է տարբերուել: Դրա հետ եղել են տոհմեր, որոնք քրիստոնէութեան ընդունումից յետոյ չեն փոխել տոհմական խորհրդանիշը, դրանցից են օրինակ, Մամի-

կոնեսանները, որոնց զինանշանի յօրինուածքը, մեր կարծիքով ձեւաւորուել է հելլենիզմի դարաշրջանում: Այդ մասին կը խօսուի ներկայ աշխատութեան համապատասխան տեղում:

Սոյն աշխատութեան երկրորդ բաժինը նուիրուած է զարգացած աւատապետութեան դարաշրջանի զինանշաններին, նրանում շարունակուում է վերը նշուած երեք տոհմերի զինանշանների քննութիւնը: Եթէ առաջին մասում քննուում եւ պարզուում է զինանշանների այս կամ այն տոհմերին պատկանելու հարցը, ապա սոյն աշխատութեան մէջ քննութիւնը կատարուում է զինանշանի ձեւաւորման մէջ տեղի ունեցած փոփոխութիւնների շուրջ կապուած դարաշրջանի քաղաքական ընթացքի հետ (տոհմերի ճիւղաւորում, անկախ պետականութեան կարգավիճակ): Քննութեան ընթացքում ցոյց է տրուում, որ Բագրատունիների իշխանութեան շրջանում Հայաստանում զինանշանները հասել էին զարգացման բարձր մակարդակի, ձեւաւորուել էր նրանց համակարգը, արտայայտչական ձեւերի առանձին ուղղութիւնները: Այդպիսի ուղղութիւններից մէկն առաջ էր եկել Բագրատունիների հոգեւոր-մշակութային խոշոր կենտրոն Սանդղկայ վանքում (Արշարունիք):

Պետականութեան ժամանակաւոր անկման պատճառով խորհրդանշանների զարգացումը ընդհատուել է; բայց Թ-ԺԱ. դդ. յօրինուածքների համակարգն ու կանոնները փոխանցուել են Չաքարեանների իշխանութեանը եւ հարստանալով դարձել են աւելի կատարեալ ու բազմազան: Յօրինուածքների բազմազանութիւնը մատնանշում է այն իրողութիւնը, որ հայկական միջնադարեան զինանշանները չեն սահմանափակուում սոսկ ազնուական տոհմերի զինանշաններով: Գոյութիւն են ունեցել նաեւ պետութիւնը, անկախութիւնը խորհրդանշող պատկերանշաններ եւ նոյնիսկ բարդ յօրինուածքներ: Դրանց լաւագոյն օրինակն է զինանշան քանդակաչարը Հառիճի վանքում:

Ուսումնասիրող նիւթը, որ քննութեան է ենթարկուել առաջին եւ ներկայ աշխատութիւններում, պարզորոշ դրսեւորել է իրեն որպէս պատմական կարգ (մասամբ նաեւ պատմա-իրաւական), առանձին դէպքերում կատարելով սկզբնաղբիւրի դեր եւ լրացնելով գրաւոր աղբիւրների պակասը: Աւատապետական հասարակութեան ներքաղաքական յարաբերութիւնների օրինաչափութիւնները, պետութեան վարչա-քաղաքական (պետական) կառուցուածքը, պետութեան պաշտօնական քաղաքականութիւնը եւ սրանց հետ յարակցուող այլ հարցեր իրենց առարկայական-գեղարուեստական արտացոլումն են

գտնում զինանշաններում եւ պաշտօնական այլ յօրինուածքներում: Այդ պատճառով էլ որեւէ դարաշրջանի զինանշանները ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է լաւ ճանաչել այն օրէնքներն ու կանոնները, որոնցով ապրում եւ զարգանում էր հասարակութիւնը:

Մենք գտնում ենք, որ մի օր հնարաւոր կը լինի «խօսեցնել» քարէ պատկերաքանդակները կամ գունեղ մանրանկարները: Զինանշանների ուսումնասիրութիւնները իրենց գիտական արժէքով հաւասար են պատմա-հնագիտական կամ պատմա-ազգագրական եւ նման այլ տեսակ ուսումնասիրութիւններին: Դրա բնորոշ օրինակն է պատկերանշանների համագործակցութիւնը պատմա-իրաւական քննութեան հետ Զաքարեանների քաղաքական կարգավիճակի եւ ինքնիշխանութեան պարզաբանման խնդրում, որի մասին մանրամասն խօսում է համապատասխան բաժնում:

Նախորդ (1994) եւ ներկայիս աշխատութիւններում կատարած քննութեամբ թերեւս չի սպառւում հայկական զինանշանների Հարուստ ժառանգութեան ուսումնասիրութիւնը: Բազմաթիւ տոհմերի խորհրդանիշ պատկերանշանները թերեւս սպասում են ուսումնասիրողներին, դրանց թւում են Վասպուրականի, Սիւնիքի, Արցախի եւ այլ երկրամասերի զինանշանները:

ԲԱԺԻՆ Ա.

ՀՆԱԳՈՅՆ ՇՐՋԱՆ ԵՒ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐ

ԳԼՈՒԽ Ա.

ԱՐՏԱՇԵՍԵԱՆՆԵՐԻ ԶԻՆԱՆՇԱՆԸ

1. ԾՈՓՔԻ ԵՒ ԱՐՏԱՇԵՍԵԱՆ ԱՌԱՋԻՆ

ՌԱԳԱԻՈՐՆԵՐԻ ԶԻՆԱՆՇԱՆՆԵՐԸ

Արտաշէսեան պետութեան վաղ շրջանի զինանշանների պատկերագրութիւնը սերտօրէն կապուած է Ծովքի թագաւորների նշանների հետ: Ծովքում են հատուել առաջին հայկական դրամները, որոնց վրայ դրոշմուել են հելլենիստական շրջանի առաջին հայկական զինանշանները: Վերջինները ժառանգուել եւ միաձուլուել են Արտաշէսեանների խորհրդանշաններին:

Ք.Ա. դ. առաջին կէսին Երուանդունիների իշխանութիւնը տարածուած է Ծոփքին սահմանակից Կոմմագէնի երկրի վրայ: Կոմմագէնէն եւ Ծոփքը վերածուած են վարչական մի միաւորի, որ այնուհետեւ առանձնացուած է հայկական թագաւորութիւնից եւ դառնում ինքնուրոյն (մօտ Ք.Ա. 260), Երուանդեան Սամոս թագաւորի իշխանութեան ներքոյ: Սամոսին յաջորդում է որդին Արշամը (240-210 Ք.Ա.): Սակայն միացեալ այդ թագաւորութիւնը շուտով նորից բաժանուած է երկու մասի:


201 թ. Ք.Ա. Ծոփքը գրաւուած է Սելեւկեան թագաւոր Անտիոքոս Գ-ն, նոյն թուականին Սելեւկեանների պետութեան է միացուած նաեւ Մեծ Հայքը: Հայաստանում տեղի է ունենում գահակալական պայքար Երուանդ Վերջին Երուանդեանի (Ք.Ա. 220-201) եւ նրա ազգակից, Անտիոքոսի ծառայութեան մէջ գտնուող Արտաշէս զօրավարի միջեւ: Երուանդ սպանուած է, իսկ Մեծ Հայքը, Ծոփքի նման դառնում է Սելեւկեանների սատրապութիւն:

Մեծ Հայքի կառավարումը Անտիոքոս յանձնում է Արտաշէսին, իսկ Ծոփքում կառավարիչ է նշանակուում Զարեհ: Սակայն Ք.Ա. 190 թ. Մագնեսիայի ճակատամարտում Անտիոքոս ծանր պարտութիւն է կրում Հռոմի հանրապետութիւնից, Հայաստանն անկախանում է Սելեւկեաններից, Արտաշէս թագաւորում է Մեծ Հայքում, իսկ Զարեհ Ծոփքում: Հաւանաբար այս Զարեհին է նկատի ունեցել Արտաշէս, իր անունից գրած արամայերէն արձանագրութիւնում՝ «Արտաշէս ... որդի Զարեհի, Երուանդական»¹:

Յայտնի են Ծոփքի թագաւորներ Արշամի, Աբդիսարէսի եւ Քսերքսէսի դրամները. մեզ հասած առաջին դրամը հատել է Արշամ: Նրա դրամների առաջին երեսին պատկերուած է թագաւորի դիմանկարը, իսկ երկրորդ երեսի վրայ (այսուհետեւ՝ Բ երես, Բ կողմ) տարբեր պատկերներ: Դրամներից մէկի Բ երեսին պատկերուած է հեծեալ կամ յաղթանակի աստուածուհի Նիկէի պատկերը, միւս օրինակում Բ երեսին արծիւ է, ճանկերում կայծակ² (նկ. 1):

1 ՏԻՐԱՅԵԱՆ Գ., Հայաստանը Ք.Ա. Գ. դ., տե՛ս Հայ ժողովրդի պատմութիւն, հտ. 1., Երևան, 1971, էջ 510-516: Նոյնի՝ Страна Коммагена и Армения. "Известия" АН АрмССР, 1956, N. 3.

2 ԱՌԱՔԵԼԵԱՆ Բ., Ակնարկներ հիմ Հայաստանի արուեստի պատմութեան (Ք.Ա. 2. դ-Ք.Յ. Գ. դ.), Երևան, 1976, էջ 61, 62, նկարը՝ տախտակ ԿԸ, Ատրպետ, Հայ քաղաքների դրամները, «Ազգագրական հանդէս», դիրք ԻԲ.,



Նկար 1 ԱՐՇԱՄ ԹԱԳԱՒՈՐԻ ԴՐԱՄԸ

Քսերքսէսի դրամի Բ երեսին պատկերուած է Նիկէ աստուածուհուն։ Իսկ Աբղիսարէսի դրամը ունի արծուի պատկեր, որ ըստ Բ. Առաքելեանի Արամազդ-Չեւսի խորհրդանշանն է, տրուած է նաեւ յունարէն մակադրութիւն «Բասիլէոս Աբղիսարու» (նկ. 2)։ Մի այլ օրինակում պատկերուած է նժոյգ³։


Նիկէի կամ ձիաւորի պատկերները տուեալ տոհմի գինանշաններ չեն, առաջինի պատկերը տարածուած էր հելլենիստական աշխարհի բոլոր պետութիւնների արուեստում, այդ թւում եւ դրամական պատկերազրութիւնում։ Այլ բան է արծուը։ Նրա կերպարը որպէս գինանշան ընդունուած էր շատ երկրներում, ինչպէս հելլենիստական շրջանում, այնպէս էլ միջին դարերում։ Արտաշէսեանների գինանշաններում նոյնպէս յաճախ հանդիպում է արծուի պատկեր, պար-



Նկար 2 ԱՐԴԻՍԱՐԷՍԻ ԴՐԱՄԸ

Թիւ 2, Թիֆլիս, 1912, էջ 29, (Բ կողմում՝ Նիկէ)։ ՀԱՅՈՒՆԻ Վ., Պատմութիւն հիմն հայ տարագիրն, Վենետիկ, 1923, էջ 47-49, նկար Ա (48-49 էջերի միջեւ), Բ կողմում՝ արծու։

3 ԱՌԱՔԵԼԵԱՆ Բ., նշ. աշխ., էջ 62, տախտակ ԿԸ.։ Ատրպետ, նշ. աշխ., էջ 30։



Նկար 3 ԱՐՏԱՆԱԶԳ Ա ԹԱԳԱՆՈՐԻ ԴՐԱՄԸ

զորոշ նկատում է աւանդոյթի փոխանցում եւ շարունակութիւն:

Արտաշեսեանների դրամահատութիւնը շատ աւելի երկար է տեւել, քան Ծովքի, եւ հարուստ է պատկերադրութեամբ: Արքայատոհմի առաջին թագաւորներն էին Արտաշէս Ա. (Ք.Ա. 189-160) եւ նրա որդին՝ Արտաւազդ Ա. (Ք.Ա. 160-123): Մովսէս Խորենացին ունի վկայութիւն Արտաշէսի «նշանների» մասին (նկատի ունի տարբերակիչ նշաններ): Երուանդ Վերջինի եւ Արտաշէսի դահակալական պատերազմի ժամանակ Երուանդի զօրքը բանակել էր Սեւանայ լճի մօտ, գրում է պատմիչը, բայց երբ «Արտաշէսի նշանները Երուանդի զօրքի նակատի առաջ երեւացին», զօրավար Արգամ, Մուրացեան տոհմից, հետեւակ զօրքը դուրս բերեց ռազմադաշտից եւ անցաւ Արտաշէսի կողմը⁴: Ցաւօք, Խորենացին չի նկարագրում նշանների տեսքը:

Առաջին Արտաշէսեան թագաւորների՝ Արտաշէս Ա.ի եւ նրա որդի Արաւազդ Ա.ի դրամները երկար ժամանակ յայտնի չէին, վերջապէս 1971 թ. լոյս տեսաւ դրամադէտ Ասպետ Տօնապետեանի յօդուածը, ուր հեղինակը քննում է նորերս յայտնաբերուած արտաշէսեան դրամ եւ վերագրում այն Արտաշէս Ա.ին:

Դրամի առաջին երեսի վրայ պատկերուած է արքայի կիսանդրին, նրա թագը համեմատ Տիգրան Բ.ի եւ Արտաւազդ Բ.ի յայտնի թագերի հետ ունի նախնական տեսք եւ նուազ զարդարուած: Չկան զոյգ արձիւներ, ութանկիւն արեւը: Նրա ոճը իր սկզբնական շրջանի մէջ է:

4 ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ, Պատմութիւն հայոց, Երեւան, 1991, Բ., ԻԶ, էջ 109:

Դրամը Բ երեսի վրայ ունի ուշագրաւ պատկեր. կենտրոնում ուռուցիկ կէտերով քանդակուած է բարձր, սրագագաթ լեռ, գագաթին թառած է խոշոր արծիւ, դիրքը դէպի ձախ⁵ (նկ. 3): Ա. Տօնապետեանի կարծիքով այս արծիւը նախատիպ է ծառայել արտաշէսեան թագերի ոճին, որ մէկ դար անց զարգարեց հայոց կայսեր թագը, սակայն Տիգրան Բ-ի թագի վրայ երկու արծիւներ են, նրանց միջեւ ութանկիւն արեւ: Տօնապետեան կարծում է, որ լեռը ներկայացնում է Հայաստանի կարեւոր լեռներից մէկը, միաժամանակ խորհրդանշում Հայաստանը, որ լեռնային երկիր է⁶:

Արծուակիր լեռան երկու կողմերից կան գրութիւններ յունարէն լեզուով. աջից «Բասիլէոս մեգալոյ» («արքայի մեծի»): Ձախից մէկ սիւնակով երեւում են բառի առաջին չորս տառերը՝ ΑΡΤΑ, իսկ մնացածը ծածկուած է սեւ կորկով եւ անընթեռնելի⁷:

Արտաշէսեան հարստութեան թագաւորների շարքում, շարունակում է Տօնապետեան, կան 5 գահակալներ, որոնց անունը սկզբում է ΑΡΤΑ տառերով. երկու Արտաշէսներ եւ երեք Արտաւազդներ: Նկատի ունենալով դրամի կշիւը (4.0 գր.), մետաղը, թագի ձեւը, ոճը, խորագրերը, նա դրամը վերագրում է այն թագաւորին, որ գահակալել է Տիգրան Բ-ից առաջ, Տիգրանի եւ նրա յաջորդ Արտաւազդ Բ-ի թագերը շատ աւելի կազմաւորուած են (ասել է ձեւաւորումով աւելի կատարեալ են), քան խնդրոյ առարկայ դրամի թագը: Մակագրութիւնները նոյնպէս տարբերում են («Արքայի մեծի», Մակագրութիւնները նոյնպէս տարբերում են («Արքայի մեծի»), Միւս կողմից, Արտաւազդ Բ-ի յաջորդող Արտաշէս Բ-ին եւ Արտաւազդ Գ-ին այս դրամը չի կարելի վերագրել, որովհետեւ, ըստ Տօնապետեանի, Արտաւազդ Գ-ի դրամը չի գտնուած, իսկ Արտաշէս Բ-ին վերագրուած է միայն մէկ դրամ, այն էլ անբաւարար փաստով:

Այսպիսով, հինգ գահակալներից, որոնց կարելի է վերագրել դրամը, մնում են երկուսը Արտաշէս Ա. եւ Արտաւազդ Ա.: Տօնապետեանը հակուած է դրամը վերագրել Արտաշէսին, նկատի ունենալով թագաւորի անունն անընթեռնելի մասի կարճութիւնը. աւելի

5 ՏՕՆԱՊԵՏԵԱՆ ԱՍՊԵՏ, Արտաշէսեան հարստութեան հիմնադիր Արտաշէս Ա-ի պղնձ դրամը, տե՛ս «Հայկական հայագիտական հանդէս», Բէյրութի, 1971, թիւ 2, էջ 139, 140:

6 Նոյն, էջ 140:

7 Նոյն տեղը:

յարմար է այն վերձանեւ ԱΡΤΑΣΙΟΥ, քան աւելի երկար «Արտաւազդ»: Այդ պատճառով հաւանականութիւնը քիչ աւելի Արտաշէսի կողմն է: Իսկ երկրորդ ամենահաւանական գահակալն է Արտաւազդ Ա.⁸:

Սակայն, 10 տարի անց Տօնապետեանը տպագրեց նոր յօդուած, ուր փոխեց իր կարծիքը եւ դրամը վերադրեց Արտաւազդ Գ.ին⁹:

Այսօր նախորդ երկու վերագրումները համարում ենք անընդունելի, գրում է դրամագէտը: Անցած տասնամեակում Տօնապետեան ձեռք էր բերել նոյն դրամի չորս նոր օրինակ, որոնց օգնութեամբ պարզուեւ է, որ գահակալի անունը ոչ թէ Արտաշէս է, այլ Արտաւազդ: Աւելին, նախկին դրամի կորկը թեթեւակի մաքրելով պարզուեւ է, որ այստեղ եւս մակագրութիւնը, ինչպէս միւս չորս օրինակներում, Արտաւազդ է¹⁰:

Եթէ համեմատենք այս դրամները Տիրան-Տիգրան Ա.ի (Ք.Ա. 123-96) դրամների հետ, ապա նկատուում է, որ Տիգրան Ա.ի դրամների արուեստը աւելի նախնական է եւ կոպիտ, այնինչ սպասուում էր հակառակը, քանի որ Արտաւազդ Ա., (Տիգրան Ա.ի հայրը) գահակալել է Տիրանից առաջ: Սրանից եզրակացուում է, որ դրամը պատկանում է աւելի ուշ շրջանի գահակալին, ամենահաւանական թեկնածուն Արտաւազդ Գ.ն է¹¹: (Արտաւազդ Գ. չէր կարող լինել, նա գահակալել է Օգոստոս կայսեր հովանաւորութեամբ 4-6 թթ. եւ նրա դրամի Բ երեսին պատկերուած է Օգոստոսի կիսանդրին): Այնուհետեւ Տօնապետեանը կատարելով դրամագիտական որոշ հաշուարկներ (դրամի կշիռ, տառերի տիպ եւ այլ), կըրկնում է իր եզրակացութիւնը: Նրա կարծիքով, 3 տարի գահակալելով (Ք.Ա. 52) Արտաւազդ Գ. (որ Հռոմի դրածոն էր եւ սպանուեց ապստամբութեան ժամանակ) տրամաբանական է դրամի երեսին միայն երկու պատկերով պլինձ դրամ թողարկած լինի: Այժմ, եզրակացնում է Տօնապետեան, ամենահաւանական ենք համարում այդ դրամի թողարկումը Արտաւազդ Գ.ի կողմից¹²:

8 Նոյն, էջ 142-143:

9 ՏՕՆԱՊԵՏԵԱՆ ԱՍՊԵՏ, Արտաւազդ Գ. Արտաշէսեանի դրամահատութիւնը, տե՛ս «Հայկազեան հայագիտական հանդէս», Բէյրութ, 1982-84, թիւ 10:

10 Նշ. յօդուածը, էջ 194:

11 Նոյն, էջ 195:

12 Նոյն, էջ 200, 201:

Մեր կարծիքով, դրամի վերագրումը Արտաւազը Գ-ի սխալ է: Նախ, դրամի առաջին երեսին պատկերուած թագաւորի թագը, իրօք, շատ աւելի նախնական տեսք ունի, քան Տիգրան Բ-ի թագը: Այդ պատճառով, այն կտրուել է Տիգրան Բ-ից առաջ:

Երկրորդ: Քննուող դրամը հատող թագաւորի եւ Տիրան-Տիգրան Ա-ի թագերը շատ իրար նմանուում են ոճի պարզութեամբ (թագի նախնական ձեւ) (նկ. 4) եւ արուեստով իրար մօտ են: Այդ պատճառով համաձայն չենք Տօնապետեանի կարծիքին,



Նկար 4

ՏԻՐԱՆ-ՏԻԳՐԱՆ Ա-Ի ԴՐԱՄԸ

որ խնդրոյ առարկայ դրամը կտրող թագաւորը (որի անունն է Արտաւազը) պէտք է սպրած լինի Տիգրան Բ-ից յետոյ:

Երրորդ: Քննուող դրամի թագաւորի թագը չունի աստղաձեւ արեւ, ինչպէս եւ Տիգրան Ա-ի թագը: Առանց արեւի թագերը բնորոշ են մինչեւ Տիգրանեան (այն է Տիգրան Բ-ի) շրջանի թագերին:

Թուարկած պարագաները հաշուի առնելով, եւ նկատի ունենալով «Արտաւազը» անուան ներկայութիւնը դրամի վրայ, մենք քննուող դրամը վերագրում ենք Արտաւազը Ա-ին (Ք.Ա. 160-123) եւ համամիտ ենք Ա. Տօնապետեանի առաջին վարկածին:

Վերը ասուեց, որ դրամի վրայ պատկերուած է արծիւ, թառած լեռան դադաթին: Տօնապետեանը միանգամայն իրաւացի է, որ այդ լեռը խորհրդանշում է Հայաստանը: Բայց եթէ տրամաբանական աւարտին բերենք այդ միտքը, ապա լեռը կարող է լինել Արարատը: Այդ լեռը, արձանագրուած Աստուածաշնչում եւ որի անունով էլ կոչուել է ժամանակին երկիրը, շատ համապատասխան էր երկիրը խորհրդանշելու համար: Իսկ արծիւը համահնչիւն է Մովսէսի թագաւորների խորհրդանշիչ արծուին:

Արտաւազը Ա-ին յաջորդող թագաւորների դրամների վրայ նոյնպէս պատկերուել է արծիւ: Նրա որդի Տիրան-Տիգրան Ա-ի դրամների Բ երեսները ունեն տարբեր պատկերներ Մառ (կենաց ծառ), ների Բ երեսները ունեն տարբեր պատկերներ¹³: Բայց դրամներից մէկը առանձնակի Ձեւս եւ Նիկէ աստուածներ¹³:

13 Coinage of the Artaxiads of Armenia, by BEDOUKIAN PAUL Z., London, 1978, տախտակ 1, նկ. 3, 4, 6:

է եւ կարեւորում է իր խորհրդանշով. նրա Բ երեսին պատկերուած է Վահագն-Հերակլէսի նկարը, ձեռքը պարզած, իսկ ափի մէջ արծիւ (նկ. 4): Գրուած է նաեւ յունարէն մակագրութիւն «Բասիլէոս Մեգալոյ Տիգրանոյ Տիլլենոս»¹⁴: Այսպիսով, առաջին արքայական դրամների շարքը՝ (Արշամից մինչեւ առաջին Տիգրան) Բ երեսի վրայ ունի արծիւ: Արեւ դեռեւս չկայ, այն տեղ է գտնում դրամների պատկերներում սկսած Տիգրան Բ-ի գահակալումից եւ պահպանւում մինչեւ Արտաշէսեան հարստութեան անկումը:

2. ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԿԱԼ ՏԵՐՈՒԹԵԱՆ՝ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԸ ՏԻԳՐԱՆ Բ-Ի ՕՐՕՔ

Տիգրան Բ-ի գահակալութեան շրջանում հայկական արքայական պատկերագրութիւնը, նախորդ թագաւորների նշանների համեմատ մեծ թռիչք է կատարում: Ընդ որում այն փոխում է Տիգրանի ռազմական յաղթանակներէն գուլքնթաց եւ աւարտուն ձեւ է ստանում աշխարհակալ տէրութեան կամ կայսրութեան ստեղծման շրջանում: Եթէ նրա գահակալութեան սկզբնական շրջանում թագի վրայ աւելանում է աստղածեւ արեւը, բայց առանց արծիւների, ապա երբ աւարտում են նուաճումները եւ հիմնում կայսրութիւնը, թագի պատկերագրութիւնը լրացւում է նոր բաղադրիչներով եւ դառնում եռանդամ արեւի երկու կողմերից տեղադրւում են արծիւներ, ընդ որում նրանք զոյգ արծիւներ են (ծնող-գոյգ, տարբեր սեռի) (նկ. 5):

Նոր խորհրդանշանը արտայայտում է ոչ միայն նորաստեղծ պետութեան իրաւական կարգավիճակը եւ նրա հզօրութիւնը, այլ՝ նրա վարչատարածական (պետական) կառուցուածքը:

Տիգրանի արքայական պատկերագրութեան մէջ մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում հազուադէպ մի դրամ, որի առաջին երեսին Տիգրանի դիմանկարի հետ շատ նեղ կիսադէմքով ներկայացուած է երկրորդ թագաւորը, իսկ Բ երեսի վրայ երկու լեռ: Դրամագէտ Զ. Պտուկեանի կարծիքով առաջին երեսի երկրորդ գահակալը Կապադովկիայի թագաւոր Արիարաթն է, Միհրդատ Պոնտացու որդին: Իսկ Բ երեսին պատկերուած է Կապադովկիայի Արգաուս լեռը

14 Նոյն, տախտակ 1, թիւ 5: Նշուած բոլոր դրամների նկարագրութիւնը տե՛ս էջ 46, 47 էջերում:



Նկար 5 ՏԻԳՐԱՆ Բ ԹԱԳԱՒՈՐԻ ԴՐԱՄԸ

(նրա երկու գազաթները)¹⁵ (նկ. 6):

Այս դրամի թողարկումը ունի իր նախապատմությունը: Արգառառ լեռը այն հրաբուխն է, որ գտնուում էր արիմների երկրում եւ որի մասին գրում են յունական աղբիւրները: Այն գտնուում էր Կեսարիայի շրջանում, որ հնագոյն ժամանակներում Կիլիկիայի թագաւորութեան կազմում էր, իսկ Ք.Ա. Դ. միացուել էր Կապադովկիային: Մովսէս Խորենացին նկարագրել է հայերի նախահօր՝ Արամի կռիւը Տիտանեան Պայպալիս Քաաղիա-



Նկար 6

ՏԻՐԱՆ-ՏԻԳՐԱՆ Բ-Ի ԴՐԱՄԸ

¹⁵ Coinage of the Artaxiads, տախտակ 6, թիւ 128 եւ էջ 24, 68:

յի դէմ: Հ. Մարկոսարտի կարծիքով կռիւը տեղի է ունեցել Արգա-
ուս հրաբխային լեռան մօտ Կեսարիայի շրջանում¹⁶:

Ք.Ա. 93 թ., Մոփքի միացումից յետոյ Տիգրանը Միհրդատ
Պոնտացու յորդորմամբ, յարձակուեց Կապադովկիայի վրայ եւ գրա-
ւեց ամբողջ երկիրը: Արիաբարզան թագաւորը փախաւ Հռոմ: Սրա
փոխարէն թագաւոր հաստատուեց Միհրդատի փոքրահասակ որդի
Արիարաթը: Սակայն Արիաբարզան Հռոմի օգնութեամբ կարողա-
ցաւ վերագրաւել երկիրը, բայց 91 թ. նորից Տիգրանի օգնու-
թեամբ Կապադովկիան յանձնուեց Արիարաթին¹⁷: Այդ իրադարձու-
թեան առթիւ թողարկուել է դրամ, որի վրայ պատկերուած են Տիգ-
րանը եւ նեղ կիսադէմքով Արիարաթը: 2. Պտուկեան միանգա-
մայն ճիշտ է որոշել երկրորդ անձը: Ինչ վերաբերուած է լեռան,
ապա մեր կարծիքով, պատկերուած են ոչ թէ Արգաուսի երկու գա-
գաթները, այլ երկու լեռներ պատկերի վրայ պարզ երեւում են եր-
կու տարբեր լեռներ, մէկը աւելի հզօր եւ վեհ: Նրանցից մէկն Ա-
րարանն է, իսկ միւսն Արգաուսը: Առաջինը խորհրդանշում էր Հա-
յաստանը, միւսը նրա դաշնակից Կապադովկիան: Սա երկրորդ, մեզ
յայտնի, դէպքն է, երբ արտաշեսեանների դրամների վրայ պատկեր-
ւում է Արարատը:

Դրամագէտների նեղ շրջանակներին յայտնի է Տիգրանի հա-
զուագիւտ մի դրամ, որ շատ արժէքաւոր է մեզ հետաքրքրող հար-
ցի տեսանկիւնից: Այն պատկանում է Պէյրուլթաբնակ դրամագէտ
Երուանդ Ապաճեանին, որ եւ ցուցադրել է այն 1981 թ. կազմակեր-
պուած ցուցահանդէսում: Դրամի առաջին երեսին թագաւորի դի-
մաքանդակն է, իսկ Բ երեսին Արարատ լեռը, գագաթին աղաւնի (հա-
ւանաբար արծիւ): Նշուած դրամի վերաբերեալ գիտական մամուլում
հաղորդում չենք հանդիպել եւ տուեալներ քաղել ենք Երեւանում լոյս
տեսնող շաբաթաթերթերից մէկում տպագրուած լրատուութիւնից
(տե՛ս «Առաւօտ», 4 Փետրուարի 1995 թ.):

Խորհրդանիշերի բերուած օրինակները վերաբերուած են Տիգ-
րան Բ-ի գահակալութեան սկզբնական շրջանին, երբ նոր էին սկսուել
նուաճումները եւ հայկական կայսրութիւնը սկզբնաւորման շրջա-

16 ՄԱՆԱՆԴԵԱՆ Յ., Գննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան, հտ-
Ա., տե՛ս «Երկեր», հտ. Ա., Երեւան, 1977, էջ 25, 26: Նաեւ՝ Հայ ժողովրդի պատ-
մութիւն, հտ. Ա., Երեւան, 1971, էջ 234.

17 ՄԱՆԱՆԴԵԱՆ Յ., նշ. աշխ., էջ 145, 146.

նում էր:

Պատերազմները տեւեցին 25 տարի (95-70 թթ.), Հայաստանին միացուեցին բազմաթիւ երկրներ, որի հետեւանքով Արտաշէսեան թագաւորութիւնը դարձաւ կայսրութիւն: Ք.Ա. 83 թ. Հայաստանին կամաւոր միացաւ Ասորիքը եւ նրա գահը յանձնեց Տիգրանին: Անտիոքը դարձաւ նորաստեղծ հայկական տէրութեան Հարաւային մայրաքաղաքը, իսկ Արտաշատը մնաց հիւսիսում: Այդ պատճառով Տիգրանը կառուցեց Տիգրանակերտը, որ բուն Հայաստանում էր եւ գտնուում էր տէրութեան կենտրոնում¹⁸:

Տիգրանի կայսրութիւնը վարչա-տարածքային կառուցուածքի տեսանկիւնից բաղկացած էր երկու խոշոր վարչական մասերից բուն Հայաստանը եւ նրան միացուած երկրները: Հէնց այդ իրողութիւնն է արտացոլում Տիգրանի կայսերական թագի խորհրդանշիչը արծիւներից իւրաքանչիւրը ներկայացնում եւ խորհրդանշում էր տէրութեան խոշոր միաւորներից մէկը:

Չոյք արծիւները արեւի հետ միասին խորհրդանշում էին Տիգրանի հիմնած կայսրութիւնը: Խորհրդանշիչ-պատկերազրութեան իմաստաբանական վերլուծութիւնը կը տրուի ստորեւ, այստեղ տեղին է աւելացնել միայն, որ նշուած եռանդամ յորինուածքը պահանջում է մինչեւ Տիգրանի գահակալութեան վերջը (չնայած Ք.Ա. 66 թ. Պոմպէյի հետ կնքուած պայմանագրի, որով Տիգրան հրաժարուեց նուաճուած երկրների մեծ մասից) եւ նրա յաջորդ Արտաւազդ Բ-ի թագաւորութեան շրջանում: Արտաւազդից յետոյ Հայաստան կորցնում է իր նախկին հզօրութիւնը, ստիպուած է լինում դիմակայել Հռոմին եւ պայքարել անկախութիւնը պահպանելու համար: Օրինաչափ է, որ այդ շրջանում թագերի պատկերազրութիւնից վերանում են Չոյք արծիւները: Պատճառը այն էր, որ այլեւս չկար այն կայսրութիւնը, որ խորհրդանշում էին նրանք: Թագերի ճակատին (եւ դրամների առաջին երեսին) մնում է միայն արեւը, իսկ Բ երեսին, այլ նշանների թւում պատկերւում է միայն մէկ արծիւ:

Պետութեան խորհրդանշանի պարզեցուած այդ տարբերակը առկայ է դրամների վրայ արտաշէսեան պետութեան գոյատեւման վերջին երեք տասնամեակներում՝ Ք.Ա. 35, մինչեւ Երատոյ թագու-

¹⁸ Նոյն, էջ 155, 156: ՍԱՐԳՍԵԱՆ Գ., Հայկական աշխարհակալ տէրութիւնը, տե՛ս Հայ Ժողովրդի պատմութիւն, հտ. Ա., էջ 564, 566, 573:

հու միանձնեայ գահակալումը: Այդ շրջանում դրամները պատկերազրույթեան մէջ կրկնուում է արտաշէսեան նախորդ աւելի Հզօր թագաւորների նշանները՝ փիղ, ձի, առւիժ եւ աստուածներ: Ինչ վերաբերուում է արծիւին, ապա այժմ այն պատկերուում է միայն դրամների Բ երեսին: Արծուակիր են Տիգրան Գ-ի (Ք.Ա. 20-8) եւ Տիգրան Գ-ի (Ք.Ա. 8-5) դրամների մի քանի օրինակներ (միւսները վրայ այլ խորհրդանիշեր են առւիժ եւ այլ): Տիգրան Գ-ի դրամի վրայ արծիւը կողոցում պահուում է ձիթեղու ճիւղ (նկ. 7), իսկ Տիգրան Գ-ի դրամներում արծիւները տարբերուում են դիրքով. մէկը երեսը առաջ, միւսինը դէպի ձախ¹⁹ (նկ. 8, 8ա):



Նկար 7
ՏԻԳՐԱՆ Գ-Ի ԴՐԱՄԸ



Նկար 8
ՏԻԳՐԱՆ Գ-Ի ԴՐԱՄԸ



Նկար 8ա
ՏԻԳՐԱՆ Գ-Ի ԴՐԱՄԸ

Հոյգ արծիւները խորհրդանիշը անսպասելիօրէն երեւան է գալիս Տիգրան Գ-ի դրամները մէկը առաջին երեսին²⁰, բայց այդ, (արծիւներ) պատկերուած է Երատոյ թագուհու թագի վրայ, երբ վերջինը գահակալեց միանձնեայ: Դա կատարուեց Ք.Ե. 7 թ., մինչ այդ՝ Ք.Ե. 6 թ. Հռոմ Հայաստանում թագաւոր կարգեց իր դրածոյին, որ կոչուեց Տիգրան Ե.: Սակայն մէկ տարի անց հայկական աւագանին հեռացրեց նրան եւ գահը յանձնեց Երատոյին: Հայ թագուհին գահակալեց մինչեւ 11 թ., բայց Հռոմի ջանքերով զրկուեց գահից²¹:

19 Տե՛ս Coinage of the Artaxiads, տախտակ 5, էջ 71: Տախտակ 6, թիւ 138 եւ էջ 71 (Տիգրան Գ): Տախտակ 7, թիւ 155, 156 եւ էջ 74 (Տիգրան Գ):
20 Նոյն, տախտակ 7, թիւ 159 եւ էջ 75: Ա.Ռ.Ա.ՔԵԼԵԱՆ Բ., նշ. աշխ., տախտակ ՀԹ., 1:

Տիգրան Դ-ի եւ Երատոյի թագերի խորհրդանիշերը մեր կարծիքով արձագանք են նրանց քաղաքական ճգնաժամների վերականգնելու Արտաշէսեանների հզորութիւնը, իսկ անկումից յետոյ վերահաստատելու հայկական անկախ պետականութիւնը: Թագաւորների նշանները իշխանութեան պարագաների վրայ (տուեալ թագերի) արտայայտում են նրանց քաղաքական ծրագիրը եւ դործնական քայլերը:

3. ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆՆԵՐԸ ԿԻՐԱՌԱԿԱՆ

ԱՐՈՒԵՍՏԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՈՒՄ

(Հնագիտական գտածոներ)

Հնագիտական ուսումնասիրութիւնների արդիւնքները վկայում են, որ թագերի խորհրդանիշ-պատկերազրական նշանները լայն տարածում են գտել Ք.Ա. Բ-Ա. եւ յետագայ դարերում, մասնաւորապէս Արշակունիների օրօք: Նրանք պատկերւում էին արքայատոհմի եւ այլ ազնուականական տոհմերի կնիքներում, պաշտամունքային աւարկաներում եւ այլ ոլորտներում:

Արտաւազգ Ա-ի դրամի խորհրդանիշ պատկերը՝ թառած արծիւը որպէս մի բաղադրամաս դրւում էր արձանիկների վրայ, դրոշմւում գեմաներում (քարէ կնիքներում): Նման յորինուածքով նմոյշներ գտնուել են հնագիտական պեղումների ժամանակ Գառնիում, Օշականում, Դուլինում եւ այլուր: Այսպէս, ժամանակին բնորոշ քանդակապատկեր էր թառած արծիւը հրպարտ կեցուածքով, դրուած աստիճանաւոր բուրգի վրայ: Արձանիկ-արծիւ գոյգի խորհրդանիշ գաղափարը արտայայտուել է մի քանի ձեւերով մի դէպքում արծիւը ուղղակի նստած է բուրգի վրայ, միւս տարբերակում բուրգի գագաթի դերը կատարում է եղջերուի գլուխը: Երրորդ տարբերակում արձանիկը կազմուած է գոյգ մասերից եղջերու եւ նրա գլխին թառած արծիւ, (նկ. 9, 9ա, 9բ): Մէկ այլ տարբերակում արծիւը նստած է ոչ թէ բուրգի, այլ սլացիկ սեան վրայ (նմոյշը գտնուում է ՀՀ պետա-



Նկար 9

ԱՐՄՈՒՒ ԱՐՁԱՆԻԿ

21 ՀԱՑՈՒՆԻ Վ., նշ. աշխ., էջ 77, նկար 33: ԱՌԱՔԵԼԵՍՆ Բ., նշ. աշխ., էջ 70 եւ տախտակ ՀԹ., 4: Հայ ժողովրդի պատմութիւն, հտ. Ա., էջ 710:



Նկար 9ա



Նկար 9բ

ԱՐՁԱՆԻԿՆԵՐ

ԵՂՁԵՐՈՒ ԳԼԽԻՆ ԹԱՌԱՄ ԱՐՄՈՒՈՎ

կողմից յարգուած, հակառակ դէպքում այդպէս չէր մեծարուի եւ տեղ չէր գտնի ազնուական նշաններում: Նրա գաղափարական-խորհրդանշիչ իմաստը գիտնականները բացատրում են տարբեր ձեւով: Հնագէտը Կ. Կուշնարեւայի կարծիքով (այլ խորհրդանշանների հետ, օր. եռանկիւնի առարկաների) հանդէս է գալիս որպէս լեռ: Խորհրդանշանի այդ տարբերակը սերտորէն կապուած է լեռնային տեղանքի հետ եւ խորհրդանշում է լեռնային աստուածութիւն: Արծուի եւ լեռան գծապատկեր (գրաֆիկ) միաձուլումը շատ ակնառու արտայայտուած է Շահթախթիի յայտնի անօթի նկարներում²⁴:

Բ. Առաքելեանի կարծիքով, արծիւը խորհրդանշել է արեւը, երկիրը, հանդիսացել է գլխաւոր երկնային աստուածութեան բնորոշ յատկանիշ: Եղնիկի (կամ եղջերուի) գլխի պատկերումը, որի վրայ թառել է արծիւը, թոյլ է տալիս այդ գուգորդութեան մէջ դիտել արեւի եւ

կան պատմութեան թանգարանում): Նոյն տեսակի եղջերուի գլուխ պատկերուած է քարէ կնիքում²² (նկ. 10), որ անկասկած պատկանել է ազնուական որեւէ ընտանիքին, բացառուած չէ, Արտաշեսեանների արքայատոհմից: Կնիքների նկարներում պատկերուել է նաեւ արծիւ, նստած տարբեր կենդանիների՝ ձիու, եղջերուի մէջքին²³ (նկ. 11. ձի):

Բերուած օրինակներում արծիւը, անկասկած, խորհրդանշում է որոշակի գաղափար վեհ եւ բոլորի

22 ԱՌԱՔԵԼԵԱՆԻ Բ., նշ. աշխ., տախտակ ԽԹ., 5:

23 ԽԱՉԱՏՐԵԱՆԻ Ժ., Հայաստանում յայտնաբերուած քաղաքային կնիքները, «Պատմա-բանասիրական հանդէս», 1965, թիւ 1, էջ 274-276, նկ. 4 (եղջերուի մէջքին), նկ. 5 (ձիու մէջքին): Նոյնի՝ Դիտորդութիւնների Հայաստանի հելլենիստական շրջանի գլխաւորիկայի մասին, տես ՉՀ ԳԱ «Լրաբեր» (Հասարակ դիտ. բաժանմունք), 1974, թիւ 7, էջ 102, նկ. 4, 5: Г. Тирация, VI век д.н.э. - III век д.н.э., Ереван, 1998, с. 67, табл. XV, 4.

24 К. Кушнарева, Древнейшие памятники Двина, Ереван, 1977, с. 64.

լուսնի խորհրդանիշ: Իսկ աստիճանաւոր բուրգը թառած արծիւներով Հնագոյն պատկերացումներին եւ հաւատալիքների խորհրդանշաններ են եւ հաւանաբար ունեցել են ծիսական նշանակութիւն²⁵:



Նկար 10
ՔԱՐԷ ԿՆԻՓ

Եթէ Համեմատենք Արտաւազդ Ա.ի դրամի նշանը՝ թառած արծիւ բարձրագագաթ լեռան վրայ վերը թռաւրկած կիրառական առարկաների նշանների հետ, ապա պարզորոշ նկատուում է նրանց յորինուածքների հարազատութիւնը: Յօրինուածքի կառոյցը երկանդամ է առաջին անդամը (բաղադրիչը) արծիւն է, երկրորդը պատուանդանը, որի դերը կարող է կատարել լեռը, բուրգը, սիւնը, կենդանին (ձի, եղջերու):



Նկար 11 ՔԱՐԷ ԿՆԻՓ

Բոլոր դէպքերում բազմատեսակ պատուանդանը արծուի յենարանն է: Իսկ արծիւը, յենուելով այդ յենարանի վրայ, կարծէք հանդէս է գալիս որպէս պաշտպան, հովանաւոր պատուանդանի համար:

Միւս կողմից, պէտք է նկատի ունենալ, որ արձանիկի բաղադրիչները արծիւը, եղջերուն հանդէս են գալիս դրամների, կնիքների խորհրդանշաններում, նրանք ներկայացնում են պետութիւնը, այս կամ այն ազնուական տոհմը, պաշտօնական նշանների բնոյթ: Բուրգը, որպէս արծուի (պետական խորհրդանիշի) յենարան կարող էր խորհրդանշել երկիրը, ընդ որում բուրգի աստիճանները ընդգծում էին նրա լեռնագրութիւնը: Արձանիկներում արծուի հովանաւորութեան տակ գտնուող երկիրը ներկայացուած է ոչ միայն բուրգով, այլ եւ եղջերուով: Վերջինս հանդիսացել է ազնուական ազդեցիկ տոհմերից մէկի (հնարաւոր է Արտաշեսեանների արքայատոհմի մի ճիւղի) խորհրդանիշը եւ տեղ է գտել նրա կնիքներում:

Պարզ երեւում է, որ եղջերուն վայելում էր արծիւի յատուկ ուշադրութիւնն ու հովանաւորութիւնը, եւ պատահական չէ, որ արծուի հետ նա կապուած էր կամ ուղղակի (միայն իր պատկերով), կամ բուրգի միջոցով, կազմելով նրա գլխամասը (գագաթը):

25 ԱՌԱՓԵԼԵԱՆ Բ., նշ. աշխ., էջ 48-52, 80, 81:

Եղջերուն Արտաչեսեանների (միանգամայն հաւանական է նաեւ Երուանդունիների) օրօք կազմում էր պետական նշանների մի կարեւոր մաս, հաւանաբար արքայատոհմի տոհմական պաշտամունքի առարկայ: Նրա դերը պետական-ազնուական խորհրդանիշերի համակարգում կարօտ է մասնակի քննութեան:

Ինչ վերաբերւում է թառած արծուին, ապա այն, մեր համոզմամբ, հանդէս էր գալիս որպէս պետական իշխանութեան խորհրդանիշ, իսկ բուրգը (առանձին կամ եղջերուի հետ) ներկայացնում էր նրա հովանու տակ գտնուող երկիրը: Միասին նրանք խորհրդանշում էին Արտաչեսեան թագաւորութիւնը, Հայաստանը, նրա պետականութիւնը:

4. ԱՐՏԱՇԷՍԵԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԶԻՆԱՆՇԱՆԻ ՅՕՐԻՆՈՒԱԾՔՆ ՈՒ ՆՐԱ ԿԱՌՈՒՅՈՒԱԾՔԸ ՄԵԾ ՈՒ ՓՈՔՐ ԶԻՆԱՆՇԱՆՆԵՐԸ

Վերը ասուեց, որ Տիգրանի թագի խորհրդանիշ յօրինուածքը եռանդամ է կենտրոնական պատկերն է արեւը, նրան անդամակցում են արծիւները:

Այս կառոյցում արծուի նշանը զբաղեցնում է կենտրոնական տեղը եւ յօրինուածքի գլխաւոր պատկերն է: Հեթանոսական-հելլենիստական շրջանում արեւը հայերի պաշտամունքի գլխաւոր սրբութիւնն էր: Հելլենիստական ժամանակաշրջանում միապետները, ինչպէս օտար, այնպէս էլ հայ, յաճախ գլխաւոր աստուածութեան խորհրդանիշը դարձնում էին տոհմական խորհրդանշան: Տիգրան Մեծը նոյնպէս արեւը դարձրել էր արքայատոհմի խորհրդանիշ, այդ փաստը վկայող տեղեկութիւն ունի Մովսէս Խորենացին:

Ք.Ա. 40 թ. Պարթեւ թագաժառանգ Բակուրը արշաւել էր Պաղեստին (որն այդ ժամանակ ենթարկւում էր Մարկոս Անտոնիոսին): Այդ արշաւանքը մանրամասն նկարագրուած է Յովսէփոս Փլաւիոսի կողմից: Բայց Խորենացին որոշ փոփոխութիւններ է (կամ նրա ընկալմամբ ուղղումներ) կատարել Փլաւիոսի պատմածի մէջ եւ արշաւանքը վերագրել Տիգրան Բ-ին²⁶: Խորենացու պատմածով Հրէաստանի թագաւոր եւ քահանայապետ Հիւրկանոսը ներկայացել էր Հայոց սպարապետ Բարզափրան Ռշտունուն, ինդերելով իրեն ճանաչել թագաւոր

26 Տե՛ս Հայ ժողովրդի պատմութիւն, հտ. Ա., (1971 թ.) էջ 612, 613:

Հայերը, միևս ժողովուրդների նման, արեւը պէտք է պաշտէին իր առերեւոյթ շրջանի՝ երկնքի մէջ եւ հորիզոնում, յետոյ բոլորակի ձեւով, ապա եւ մարդակերպ: Ի վերջոյ արեւը համարուել է անձնաւորութիւն եւ այդպէս ներկայացուել պաշտամունքի վայրերում: Մեր հին վիպասանները երգում են. «Երկնէր-Երկին, երկնէր Երկիր», նրան միանում է ծովը, որ երկնում է կարմրիկ եղեգնիկ, որից բոց ու կրակ է դուրս գալիս, իսկ նրանց միջից կարմրիկ ու խարտեաչ պատանեակ, բոցեղէն աչքերով եւ արեւակերպ: Աւելի նոր պաշտօնեայք եւ բանաստեղծք այդ պատանեակին ճանաչեցին որպէս Վահագն, Թոռն կամ Թոռնորդի Տիգրան Երուանդունու, որ ժամանակակից էր աքեմենեան թագաւոր Կիւրոսին³⁰:

Վահագն աստծոյ կերպարն էր Վիշապաքաղը կամ վիշապալծը, առատացած նրա պաշտամունքի վաղ փուլում, երբ ամպրոպի, փոթորկի աստուածութիւնը մի էր եւ երեւան էր գալիս արու այծի եւ թեւաւոր վիշապի միասնական պատկերներով: Վիշապաքաղը բարձրանում էր երկինք, ուստի պէտք է ունենայ թեւեր: Այնուհետեւ Վահագնը դառնում է նաեւ հայերի ռազմի աստուածը, որպէս այդպիսին, արծուաթեւ վիշապի կերպարանքով, նա մարտի է տանում իր վրայ նստած Տիգրան Երուանդեանին, որ յաղթում է իր հակառակորդ Աժդահակին³¹: Նա քաջութիւն է շնորհում հայ ռազմիկներին:

Տրդատ Գ. Արշակունի թագաւորը հեթանոս ժամանակ Հայոց մեծամեծներին ուղղուած հրովարտական դիմում է նրանց հետեւեալ խօսքերով՝ «Մեծ Հայքի Տրդատ արքայից, մեծամեծներին ... որոնք իմ իշխանութեան ներքոյ են գտնուում. թող ողջոյն եւ խաղաղութիւն հասնի աստուածների օգնականութեամբ, պարարտ լիութիւն՝ արի Արամազդից, ինամակալութիւն՝ Անահիտ տիկնոջից, քաջութիւն ամենայն Հայոց աշխարհիս՝ քաջն Վահագնից»³²:

Իշխող թագաւորական հարստութեան պաշտամունքը, որ հելլենիստական աշխարհի հզօր պետութիւններից ընդօրինակել էին գրեթէ բոլոր թագաւորները եւ որն Հայաստանում ընդունուած էր

30 Նոյն, էջ 85, 86:

31 Ա.Ռ.Ա.ՔԵԼԵԱՆ Բ., Դիտողութիւններ Վիշապաքաղ Վահագնի մասին, ԳԱ «Տեղեկագիր» (Հասարակ, գիտ. բաժանմունք), 1951, թիւ 2, էջ 79: Տե՛ս նաեւ ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՅԻ, Ա., ԻՋ:

32 Ա.Գ.ԱԹԱՆԳԵՂՈՍ, Պատմութիւն հայոց, քննական բնագիրը Գ. Տէր-Մկրտչեանի եւ Ս. Կանայանցի: Աշխարհարար թարգմանութիւնը եւ ծանօթագրութիւնները Արամ Տէր-Ղեւոնդեանի, Երեւան, 1983, էջ 81:



Նկար 12 ՀՈՌՎԱՐԷՆԱԿԱՆ ԳՐԱՄԱՆԵՐ

առնուազն Արտաշէս Ա.ի ժամանակից, Տիգրանը վերանորոգեց: Աստուածացուած նախնիները կողքին նա պաշտամունքի առարկայ դարձրեց նաեւ իշխող թագաւորի անձը իր սեփական անձը, ընդունելով «աստուած» մականունը եւ թերեւս նոյնացրեց իրեն Վահագն աստուած հետ³³: Նրա թագի արեւի նշանը խորհրդանշում էր հայերի գլխաւոր նշանը՝ արեւը: Ուշագրաւ է, որ Արտաւազդ Բ.ի նորայայտ դրամի առաջին երեսին թագաւորի դէմքը դրոշմուած է արեւի ճառագայթաւոր սկաւառակի վրայ³⁴:

Արեւի նշանը, որպէս Արտաշէսեանների խորհրդանիշ, տեղադրուած էր արքայական թագի վրայ մինչեւ նրանց պետութեան անկումը:

Արտաշէսեան հարստութեան նշանը յայտնի էր նաեւ Հայաստանի սահմաններից դուրս: Հռոմում երկրորդ եռապետութեան անդամ Մարկոս Անտոնիոսը հայոց թագաւոր Արտաւազդ Բ.ի գերելուց եւ մահապատժի ենթարկելուց յետոյ արծաթեայ դրամ էլ կրտրել Հայաստանը նուաճելու առթիւ: Դրամի Բ երեսին պատկերուած է արտաշէսեան թագ, նրա վրայ աստղաձեւ արեւի երեք նըշաններ, նրանց թիկունքում նեո ու աղեղ³⁵ (նկ. 12):

³³ ՍԱՐԳՍԵԱՆ Գ., նշ. աշխ., էջ 571:

³⁴ Տէ'ս «Առաւօտ», 4 փետրուարի 1995 թ.

³⁵ Տէ'ս ՊՏՈՒԿԵԱՆ ԶԱՐԵՆԷ, Հայաստանի վերաբերեալ հռոմէական դրամներ եւ մեդալիոններ, Վիեննա, 1971, էջ 30-32, նկար, 5, Գաւա տախտակ 1, Գկ. նկար 5: Տէ'ս Գաւա ՀԱՅՈՒՆԻ Վ., Պատմութիւն հիմն հայ տարագիրն, էջ 66, նկար 23:

Թագի վրայ խորհրդանիշ յօրինուածքի միւս բաղադրամասը հանդէս է գալիս որպէս զոյգանդամ երկու արծիւներ, տեղադրուած արեւի երկու կողմերից:

Վերը մենք յայտնեցինք մեր կարծիքը արծուազոյգի մասին (ծնող-զոյգ) նրանցից իւրաքանչիւրը խորհրդանշում էր Տիգրանի կայսրութեան երկու մասերը բուն Հայաստանը եւ նրան միացուած միւս երկրները: Այսպիսով, յօրինուածքը արտայայտուում էր նաեւ հայկական կայսրութեան պետական կառուցուածքը (վարչա-տարածքային ստորաբաժանումը): Այսպիսով, մենք եզրակացնում ենք, որ Տիգրանի Թագի վրայ պատկերուած է հայկական աշխարհակալ տէրութեան (կայսրութեան) զինանշանը:

Աւելի վաղ նոյն խորհրդանիշ պատկերին անդրադարձել են Վ. Հացունին եւ մի քանի այլ ուսումնասիրողներ: Վ. Հացունին արծիւը համարել է զինանշան (վառ), սակայն Արտաշէսեաններին նոյն նացնելով Արշակունիների հետ, նոյնացրել է նաեւ նրանց զինանշանը, երկուսին էլ համարելով արծիւ:

Ա. Պատրիկը Թագի խորհրդանշանը արեւի շուրջ զոյգ արծիւները համարել է իւրայատուկ Տիգրանին եւ շատ բնական, որ նոյնատիպ ձեւաւորումով ստեղծուէր նաեւ նրա դրօշը: Ուստի Ա. Պատրիկը փորձ է արել պատկերել այդ դրօշը նոյն խորհրդանշաններով քառակուսի պաստառի վրայ³⁶:

Բայց Պատրիկը չի յստակեցնում իր միտքը խորհրդանիշ ասելով արդեօք նկատի ունի պետական զինանշան: Ըստ երեւոյթիւն այդպէս է, բայց քանի որ խորհրդանիշ կարող է չլինել պետական (այլ միայն տոհմական կամ անձնական) զինանշան, ապա եզրակացութիւնը պահանջում է յստակ ձեւակերպում:

Հայկ Տէր-Ղեւոնդեանը, որ մասնադիտական ուսումնասիրութիւն է կատարել հայկական Թագերի ծագման եւ նրանց ձեւի շուրջ, գտնում է, որ արեւ-զոյգ արծիւներ եռանդամ յօրինուածքը, կրում են Տիգրանի դրամների միայն անտիոքեան թողարկումները, հազուադէպ նաեւ Արտաւազդ Բ-ի: Նրա կարծիքով «Տիգրանեան կայսերական խորհրդանշանի արեւը վկան է ժամանակի

36 Տե՛ս ՀԱՅՈՒՆԻ Վ., Հայ դրօշներ պատմութեան մէջ, Վեներտիկ, 1930, էջ 28: ՊԱՏՐԻԿ Ա., Պատմական հայ դրօշներ, տե՛ս «Պատմա-բանասիրական հանդէս», 1967, թիւ 1 էջ 161, 162, տախտակ Ա., 1: Նոյնի, այրում՝ Հայկական տարագ, Երեւան, 1983, էջ 28, տախտակ 6:



Նկար 13 ՄԵՂԱԼՈՒՆ (Ք.Ա. Ա.դ.)

Լրացնող բաղադրիչներ են պատկերուած Տիգրան Բ-ի դրամի Բ երեսին (նկ. 5): Թագի պատկերազրույթեան մէջ, աջ արծուի կողքին մի առարկայ է, նման անօթին, նրա իմաստը չի պարզած: Իսկ ապարօշի (դիադեմի) ներքեւում ծաղիկներ են, որոնք անկասկած խորհրդանիշ են եւ առանձին վերցրած պաշտամունքի առարկայ են հանդիսացել, գուցէ սուրբ ծաղիկ, Ժողովրդի կողմից պաշտած: Այդպիսի սրբացուած առարկաներ օգտագործուած էին խորհրդանշաններում, լրացնում եւ խորացնում գլխաւոր բաղադրիչի իմաստը, նրա գաղափարը:

Արտաշէսեան խորհրդանշաններում առանձնայատուկ տեղ ունի լեռը, որ անկասկած Արարատն է: Լեռը խորհրդանշում էր երկիրը, իսկ նրա վրայ թառած արծիւը պետութիւնը, արքայատոհմը, որ իշխում էր այդ երկրում: Ուստի խորհրդանշանի այն տարբերակում, ուր լեռն ու արծիւը միասին կազմում են երկանդամ նշան (Արտաւազդ Ա-ի դրամ) յորինուածքի իմաստաբանութիւնը արտայայտում է պետութեան հովանաւորութիւնը երկրի հանդէպ: Ինչպէս ասուեց վերը, թառած արծիւը պաշտպան-հովանաւորող է, այլ ոչ թէ ճանկող: Վերջինը պատկերուած է մեղալիոնում (Սիսիան, Ք.Ա. Ա. դ.) (նկ. 13), արտաքին տեսքով այն նման է Տիգրանի թագի արծիւնե-

րին, բայց կեցուածքով խիստ տարբեր:

Տիգրանից յետոյ դրամների վրայ արծիւը մենակաց է, այդ նշանակում է, որ որպէս խորհրդանիշ արծիւը օգտագործւում էր նաեւ առանձին, առանց երկրորդ բաղադրիչի:

Նշուած երկու օրինակներն էլ խորհրդանշաններ են, (զինանշաններ), բայց ներկայացնում են հայկական պետական զինանշանի երկու տարբերակները մեծ եւ փոքր: Այդ տարբերակումը կազմուած է պետական զինանշաններում ընդունուած աստիճանակարգի հետ, ինչպէս հին աշխարհում եւ միջնադարում, այնպէս էլ նոր եւ նորագոյն ժամանակաշրջանում պետական զինանշանը ունեցել է (այժմ էլ ունի) երկու օրինակ: Առաջինը՝ դա մեծ զինանշանն է, ուր պետական խորհրդանիշը ներկայացուած է ամբողջական ձեւով, զինանշանի բոլոր տարրերի բաղադրութեամբ:

Երկրորդը՝ դա փոքր զինանշանն է, որի դերը կատարում է մեծ զինանշանի գլխաւոր տարրը (կամ գլխաւորներից մէկը):

Արտաշէսեան թագաւորութեան ժամանակաշրջանում Հայաստանի մեծ զինանշանն էր Արտաւազդ Ա-ի դրամի վրայ պատկերուած զոյգանդամ խորհրդանիշը Արարատն ու արծիւը: Որպէս փոքր զինանշան առանձին օգտագործելու Արարատն ու մենակաց արծիւը:

ԳԼՈՒԽ Բ.

ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ ԶԻՆԱՆՇԱՆՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ

1. ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ ԱՐՔԱՅԱՏՈՂՄԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1. ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ԴՐՈՒԱԾՔԸ

ՀԱՅ ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՄԷՁ

Արտաշէսեան թագաւորութեան անկումից կէս դար անց Հայաստանում հաստատուեց նոր հարստութիւն:

Հայաստանից հարաւ տարածուող Պարթեւաստանում Բ.Ա. Գ. դ. պարթեւ Արշակունիների տոհմը հիմնեց հզօր պետութիւն:

Պայքարելով Հռոմի դէմ Փոքր Ասիայում եւ Մերձաւոր Արեւելքում գերիշխանութեան համար, Արշակունիները հայերի օժանդակութեամբ, կարողացան Հայաստանում թագաւորեցնել իրենց արքայազնին: Հայաստանում հիմնուեց Արշակունեաց թագաւորութիւնը:

Հայ պատմիչներից այդ մասին կարեւոր տեղեկութիւններ է հաղորդում Մովսէս Խորենացին: Նրա վկայութիւնների Համաձայն պարթեւ թագաւոր Արշակ Մեծը (նոյն Միհրդատ Ա. Մեծ, Ք.Ա. Բ. դ.) յաղթելով բազմաթիւ թշնամիներին, Հայաստանում թագաւոր է կարգում իր եղբայր Վաղարշակին:

Սա, ըստ պատմիչի, քաջ եւ խոհեմ մարդ լինելով, անկախօրէն տիրեց իր սահմաններում եւ կենցաղական կարգեր հաստատեց մեր երկրում, սահմանեց նախարարութիւններ եւ նրանց համար նահապետներ նշանակեց պիտանի մարդկանցից «մեր նախնի Հայկի սերունդից եւ ուրիշներից»:

Վաղարշակին յաջորդել են որդին Արշակը, թոռ Արտաշէսը, ապա Արտաւազդը⁴⁰: Այսպիսով, Խորենացու տուեալների համաձայն, Արշակունիները Հայաստանում հաստատուել են Ք.Ա. Բ. դ.:

Հայ պատմագիրտութեան առաջին ներկայացուցիչներ Մ. Չամչեանը (ԺԸ. դ.), Ղ. Ինճիճեանը (ԺԹ. դ.), հին Հայաստանի պատմութիւնը շարադրելիս, հիմք են ընդունել Խորենացու հաղորդումները Վաղարշակի եւ նրա յաջորդների մասին⁴¹:

Սակայն պատմա-բանասիրութեան յաջորդ սերունդը Խորենացու հաղորդումը համարեց ժողովրդական ավանդութիւն, որ մեզ է հասել պատմահօր գրչի միջոցով:

Գր. Խալաթեանցը Վաղարշակի անձը եւ նրա զահակալման ժամանակը համարեց կասկածելի, նրա կարծիքով Արշակ Մեծին Միհրդատ Ա., Ք.Ա. 171-138 թթ.) վերազրուող Հայաստանի նուաճումը չէր կարող տեղի ունենալ այդ թագաւորի օրօք այն պատճառով, որ պարթեւները այդ ժամանակ դեռ չէին հասել մինչեւ Եփրատը: Այդ, ամենայն հաւանականութեամբ տեղի էր ունեցել աւելի ուշ՝ Միհրդատ Բ. Մեծի օրօք (Ք.Ա. 124-88), բայց Արշակունեաց հարստութիւնը Հայաստանում դեռեւս չէր հաստատուել, քանզի այս-

40 ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՅԻ, Պատմութիւն հայոց, Ա., 8: Բ., 2, 3, 6, 7, 8, 9, 11:

41 ՉԱՄՉԵԱՆ ՄԻՔԱՅԷԼ, Պատմութիւն հայոց, հտ. Ա., Վեներտիկ, 1784, էջ 207, 208: ԻՆՃԻՃԵԱՆ Ղ., Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հտ. Բ., Վեներտիկ, 1835, էջ 6, 7:

տեղ իշխում էր ուժեղ Այրարատեան հարստութիւնը (վկայակոչում է Ա. Գարագաշեանի «Քննական պատմութիւն Հայոց», մ. 1, Թիֆլիս, 1895, էջ 83-89): Այդ հարստութիւնից էր նաեւ Տիգրան Մեծը⁴²: Այնուհետեւ աստիճանաբար գերապատուութիւնը տրուեց օտար աղբիւրների հաղորդումներին, եւ վաղարշակը նոյնացուեց Պարթեւ վաղարշ թագաւորի եղբայր Տրդատի հետ, որոնք Ք.Յ. Ա. դ. գործիչներ էին: Ն. Ադոնցի մեկնաբանութեամբ, Տրդատով է սկիզբ առնում Արշակունեաց արքայատոհմի հայ տոհմաճիւղը, հակառակ ազգային աւանդութեան, որ հարստութեան հիմնադիր է համարում վաղարշակին: Տրդատի անձը խորը հետք է թողել ժողովրդի յիշողութեան մէջ: Հայերը պատմական աւանդութիւններն երբեմն զարմանալի ճշտութեամբ արտացոլում են առանձին պահեր եւ փաստեր (հեղինակը նկատի ունի պատմական կարեւոր իրադարձութիւնները՝ Ռ. Մ.), այսպէս, աւանդութիւններում հատուկէնտ պահպանուած Տրդատ թագաւորի գծերը պարզորոշ երեւում են վաղարշակի, Արտաշէսի եւ նոյնիսկ Լուսաւորչի գործակից Տրդատի կերպարներում: Ն. Ադոնցը գտնում է, որ Խորենացու գծած վաղարշակի կերպարը պատմական Տրդատի արտացոլումն է⁴³:

Կ. Բասմաջեանը վաղարշակ-Տրդատ կապակցութեան հարցում համամիտ է Ն. Ադոնցին, պարթեւ վաղարշ թագաւորը (52-78 թթ.) Խորենացու մօտ դարձել է վաղարշակ եւ Ք.Յ. 52-78 թուականները տարուած են մինչեւ (Ք.Ա. 150 թ.): Մեր պատմիչներին յիշած Արշակը նոյն Արշակ ԻԳ-ն է, (23րդ Արշակը), որ վաղարշակի արքայական անունն է («Արշակ» բառը պարթեւերէն նշանակում է թագաւոր, այդ անունը կրում էին բոլոր պարթեւ թագաւորները իրենց անձնանունան հետ միասին Ռ. Մ.): վաղարշակը վաւերական անձ է⁴⁴:

Հ. Մանանդեանը, սրանց հակառակ, գտնում է, որ Խորենացու «Պատմութեան» վաղարշակը յիշողութիւն է ոչ թէ Տրդատ Ա-ի կամ պարթեւ թագաւոր վաղարշ Ա-ի, այլ Հայոց թագաւոր Խոսրով Ա-ի հայր վաղարշ Բ-ի (186-198)⁴⁵:

42 Г. Халатянц, Армянский эпос в истории Армении Монсея Хоренского. Опыт критики источников, М., 1896, с. 253.

43 Н. Адопц, Армения в эпоху Юстиниана, СПб, 1908, с. 428-43. Հայերէն թարգմանութիւն՝ Հայաստանը Յուստինիանոսի զարաշրջանում, Երեւան, 1987, էջ 481, 482:

44 ԲԱՄՄԱԶԵԱՆ Կ., Իսկական պատմութիւն հայոց, Կ. Պոլիս, 1914, էջ 99, 101, 182, 183, 188, 189:

45 ՄԱՆԱՆԴԵԱՆ Թ., «Երկեր», հտ. Բ., Երեւան, 1978, էջ 62:

Սակայն դեռեւս Ի. դ. սկզբին գիտնականներն մի մասը ընդունում էր Վաղարշակի պատմականութիւնը: Նրանք ունէին երկու կուռան խորեհնացու հաղորդումները, որոնք նրանք համարում էին վաւերական, եւ Արշակունիի թագաւորների կտրած դրամները: ԺԹ-Ի. դդ. եւրոպացի մի չարք գիտնականներ Ֆրանսացի դրամագէտներ Օստէնը (1874-75 թթ.) է. Բաբելոնը (1890) Բ. Րոտը (1903), հայագէի Ադ. Պետրովիչը (1904) ուսումնասիրելով Արշակունիների դրամները, եզրակացրել են, որ նրանց մի մասը մի շարք յատկանիշներով դրամական տիպով, մակագրութիւններով, դրամահատութեան եղանակով եւ այլ նշաններով, ակնյայտօրէն տարբերւում են պարթեւական դրամների տիպից: Դրամների այդ շարքը Րոտը անուանում է Միհրդատեան շրջանի դրամներ (նկատի ունի վերը նշած Միհրդատ Ա. Մեծին) որովհետեւ նրանց վրայ նշուած է Սելեւկեան 173 թ., երբ թագաւորել է Միհրդատը: Ադ. Պետրովիչը եւ Րոտը «Միհրդատեան շարքի» դրամները վերագրել են Վաղարշակին, Արշակին, Արտաշէսին եւ Արտաւազդին:

Նրանց տեսակէտը պաշտպանեցին հայագէտներն էլ քանի-սը: Ատրպետը, Յ. Տաշեանը գտնում են, որ եւրոպացի գիտնականները իրաւունք ունէին նման եզրակացութիւն անելու, որովհետեւ նշուած դրամները քանի յատկանիշներով բոլորովին նման չեն պարթեւական դրամներին:

Յ. Տաշեանը «Միհրդատեան շարքի» դրամները վերագրում է Արշակունի այն թագաւորներուն, որոնց յիշատակում է խորեհնացին (Վաղարշակ եւ նրա յաջորդները) եւ անհաւանական չի համարում պատմիչի տեղեկութիւնները հայաստանում Արշակունիների հաստատման մասին: Քանի որ Վաղարշակի դրամների վրայ նշուած է Սելեւկեան 173 եւ 174 թթ. (Ք.ա. 139-138 եւ 138-137 թթ.), ապա Տաշեանը եզրակացնում է, որ հէնց այդ ժամանակ է Վաղարշակը թագաւորել Հայաստանում եւ դրամ կտրել: Յ. Տաշեանի տեսակէտին միացաւ նաեւ Ատրպետը⁴⁶:

Սակայն հայ պատմագիտութեան մէջ Յ. Տաշեանի պաշտպա-

46 Տե՛ս ՏԱՇԵԱՆ Յ., Արշակունի դրամներ, մաս առաջին, Վիեննա, 1919, էջ 166, 167, 175-176: ԱՏՊՈՅՏ, Հայ քաղաւորների դրամները նախնական ժամանակներից մինչեւ Տրդատ, «Ազգագրական հանդէս», գիրք ԻԳ, թիւ 2, 1912, Թիֆլիս, էջ 39, 40:

նուած վարկածը ընդունելութիւն չգտաւ եւ նախապատուութիւնը տրուեց հակառակ վարկածին, որ առաջ էին քաշել Ա. Գարաբաշեանն, Ն. Ադոնցը եւ ընդունել նրանց յաջորդները: Իսկ հայ դրամագէտները չչարունակեցին Արշակունիների դրամների ուսումնասիրութիւնը եւ նրանք ուշադրութիւնից դուրս մնացին: Այդպէս շարունակուեց մինչեւ 1960 ական թթ., վերջին 20 տարիների «մուս-ցուած» վարկածի պաշտպանութեամբ հանդէս եկաւ պատմաբան Լ. Շահինեանը: Վերջինը ընդունում է Խորենացու նշած Վաղարշակի պատմականութիւնը, նրա կտրած դրամների վաւերականութիւնը: Ըստ Շահինեանի, այդ դրամները կարելոք փաստարկ են Խորենացու տեղեկութիւնները ընդունելու համար⁴⁷:

Վաղարշակի, նրա յաջորդների, Արշակունի դրամների վաւերականութիւնը սկզբունքային նշանակութիւն ունի ոչ միայն հին Հայաստանի պատմութեան ճշմարտացի եւ վաւերական լուսաբանելու, Խորենացու հաղորդումների վաւերականութիւնը հաստատելու համար: Այդ հարցը սերտորէն առընչուում է նաեւ պատմութեանը յարակից խնդիրների հետ, մասնաւորապէս Արշակունիների պետական եւ տոհմական խորհրդանշանների:

Վաղարշակին վերագրուող դրամների վրայ կան խորհրդանիշ պատկերներ եւ նրանց առընչութիւնը հին Հայաստանի հետ կախուած է դրամ կտրողի պատմականութեան, Արշակունեաց տոհմին պատկանելու հետ:

Պատմա-բանասիրութեան մէջ Վաղարշակի պատմականութեան շուրջ վիճաբանութիւնները կը շարունակուեն երկար, ժամանակին կը լուծուի եւ այդ առեղծուածը, բայց այսօր Խորենացու վկայութիւնները անասել հնարաւոր չէ: Վաղարշակի վաւերականութիւնը գիտութեան մէջ այսօր ընդունում է այն չափով, որչափ նա որպէս հայ Արշակունիների հիմնադիր, յիշողութիւն է կամ Տրդատ Ա.ի, Վաղարշ Բ.ի կամ այլ պատմական գործչի: Նոյն-քանով էլ նրա կտրած դրամները առընչուում են Արշակունի այս կամ այն թագաւորի հետ եւ արտացոլում Արշակունիների հեթանոսական շրջանի պաշտօնական խորհրդանշանները:

⁴⁷ Տե՛ս ԾԱՀԻՆԵԱՆ Լ., Հայաստանը եւ առաջին Արշակունիները, Երեւան, 1993, էջ 105-109: Վաղարշակի պատմականութեան հիմնաւորումը՝ էջ 92-192:

2. ՓԱԽՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԻ ՏԵՂԵԿՈՒԹԻԻՆՆԵՐԸ ԵՒ ԱՐՇԱԿՈՒՆԻ ԴՐԱՄՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԸ

Վաղ միջնադարեան միակ մատենագիրը, որ, թէեւ հակիրճ, բայց այնուհանդերձ որոշ տեղեկութիւններ է հաղորդում հայ աւատապետական տոհմերի Մամիկոնեանների, Արշակունիների) վնանշանների վերաբերեալ, մնում է Փաւստոս Բուզանդը: Այդ տեղեկութիւնները շատ արժէքաւոր են եւ լրացնում են Արշակունիների դրամների վրայ տեղ գտած խորհրդանիշ պատկերազրութիւնը: Երկուսի կապակցութիւնը հնարաւորութիւն է ընձեռում մեզ զբաղեցնող հարցի քննութիւնը աւելի մանրամասնելու եւ եզրակացութիւններ անելու համար:

Մինչ դրամների պատկերազրութեան վերլուծութիւնը անհրաժեշտ է տալ պատմական տեղեկանք:

Բուզանդի «Պատմութիւնից» յայտնի է, որ Պապ թագաւորի տմարդի սպանութիւնից յետոյ բիւզանդական կայսրը Հայաստանում թագաւորեցրեց իր դրածոյին, Կ. Պոլսում մեծացած Վարազդատ Արշակունուն: Սակայն չորս տարի անց նրան Հայաստանից վտարեց սպարապետ Մանուէլ Մամիկոնեանը, ինքը կառավարեց երկիրը, իսկ Պապի մանկահասակ որդիներին Արշակին եւ Վաղարշակին «պահում էր իբրեւ թագաւոր»: Մանուէլը կտրուկ փոխեց պետութեան արտաքին կողմնորոշումը, քաղաքական որոշակի դրդապատճառներով նա նախընտրեց դաշնակցել Պարսկաստանի հետ եւ ընդունել Շապուհ արքայի դերադասութիւնը: Շապուհ իր կողմից ճանաչեց Պապի որդիների թագաւորական իրաւունքները, իսկ Մանուէլին նշանակեց նրանց խնամակալ եւ երկրի փաստացի կառավարիչ: Տոհմիկ ազնուական Սուրէնի միջոցով Շապուհը թագաւորական պատիւներ ուղարկեց Մանուկ թագաժառանգներին եւ Մանուէլին:

Պատմիչի հաղորդման մէջ յիշատակուող պատիւների անուններն ու նրանց ճիշտ բացատրութիւնը շատ կարեւոր է հարցի պարզաբանման համար, այդ պատճառով բնագրի համապատասխան հատուածը բերում ենք զրաբար, ապա աշխարհաբար թարգմանութեամբ:

«Եւ ետ թագաւորն պարսից տանել ի ձեռն Սուրենայ թագ եւ պատմութեան, եւ զվառ թագաւորացն տիկնոջն Զարմանդիստոյ, եւ թագս մանկանցն որդւոցն երկոցունց Արշակայ եւ Վաղարշակայ: Զսոյն եւ սպարապետին Մանուէլի այնպէս եւ տանել զթագաւորական պատմութեանն, սամոյր մի եւ զգլխոյ պատիւ գարգ-

մանակ ոսկի արծաթ, եւ ի պատիւ գլխոյ ի վերայ գագաթանն ի թիկանց արծոճուոյն՝ հանգոյցք թագի կապեալ աշխարհաւանդ հանգոյց, եւ լանջաց պատիւ՝ ապիգակ որպէս օրէնք են անլ թագաւորաց. եւ շիկակարմիր խորան, ի վերայ խորանին արծուի նշան եւ սրահակս մեծամեծ եւ կապուտակ երկնագոյն հովանոցս: Եւ ոսկի սպաս տաճարին առաքէր սպարապետին Մանուէլի. եւ տայր նա յիւրմէ՛ ձեռանէ իշխանութիւն մեծ ի վերայ աշխարհին Հայոց»⁴⁸:

Հատուածի աշխարհաբար թարգմանութիւնը՝

«Եւ պարսից թագաւորը Սուրէնի ձեռքով Ջարմանդուխտ տիկնոջ համար ուղարկեց թագ եւ պատմունքան եւ թագաւորական վառը եւ երկու մանուկների Արշակի եւ Վաղարշակի համար թագեր: Նոյնպէս Մանուէլ սպարապետի համար ուղարկեց թագաւորական պատմունքան մի սամոյր եւ գլխի պատիւ ոսկուց եւ արծաթից շինած գարգմանակ եւ գլխի պատուի վրայ, գագաթում, արծուի ետեւից, թագի կապը աշխարհաւանդ հանգոյցը եւ կուրծքին պատիւ ապիգակ, ինչպիսին կրում են թագաւորները, նաեւ շիկակարմիր խորան, խորանի վրայ արծուի նշան, եւ մեծամեծ սրահակներ եւ կապուտակ երկնագոյն հովանոցներ: Նաեւ սեղանի ոսկի սպաս էր ուղարկում Մանուէլ սպարապետին եւ անձնապէս իր կողմից մեծ իշխանութիւն էր տալիս նրան հայոց աշխարհի վրայ»:

Այս հաղորդումը բաղկացած է երկու մասից, առաջինը վերաբերում է Ջարմանդուխտ թագունու եւ նրա որդիների ստացած թագերին եւ այլ պատիւներին: Թագն ու պատմունքանը (ճոխ զգեստը) մեկնաբանութեան կարիք չունեն: Սակայն կարեւոր է վառը: Այդ բառ-եզրը նշանակում է եւ դրօշ եւ զինանշան⁴⁹: Ցաօք, պատմիչի խօսքը շատ հակիրճ է եւ պարզ չէ, թէ տուեալ դէպքում «վառ» բառը նշանակում է դրօշ թէ զինանշան: Եթէ դրօշ, ապա անպայման նրա վրայ պատկերուած կը լինէր նաեւ նշանը («նշանակը»): Կարենրա վրայ պատկերուած կը լինէր նաեւ նշանը (նշանակը): Կարենրա վրայ պատմիչը չի տալիս, «վառ»-ի նկարագրութիւնը:

48 Փաւստոսի Բուզանդացոյ պատմութիւն Հայոց, բնագիրը Գ. Պատկանեանի, թարգմանութիւնը եւ ծանօթագրութիւնները Ստ. Մալխասեանի, Երեւան, 1987, էջ 374, 375:

49 Տե՛ս Նոր Բաղգիրք հայկագեան լեզուի, հտ. Բ., էջ 784

Երկրորդ մասում թուարկուած են սպարապետ Մանուէլին յանձնուած պատիւները: Նա եւս ստացաւ թագաւորական պատմուճան, բայց ի լրացումն դրան «գարգւմանակ» «ապիզակ», որն «օրէնք էր թագաւորաց»: Այս պատիւների անունները հանդիպում են միայն Փաւստոսի պատմութեան մէջբերուած հատուածում, այդ պատճառով նրանց իմաստաւորումը կապուած է դժուարութիւնների հետ: Հակիրճ բացատրութիւններ տրուած են միայն հայերէն բացատրական բառարաններում:

Գարգմանակ նշանակում է սաղաւարտի զարդ գագաթի վրայ, արծուի նշան ետեւի կողմը, կամ սաղաւարտ վրան արծիւ (Ստ. Մալխասեան): Ըստ Հ. Աճառեանի բառը նշանակում է խոյր կամ սաղաւարտի զարդ: Ըստ Վ. Հացունու սխալ է «գարդ» նշանակութիւնը, բառը նշանակում է գլխանոց կամ սաղաւարտ, վրան արծիւ⁵⁰:

Ապիզակ կրծքից կախելու իշխանական զարդ (փաստօրէն իշխանութեան նշան)⁵¹:

17. Բացի այդ, Բուզանդը գործածում է «աշխարհաւանդ» բառը: Հ. Աճառեանը բացատրում է այն որպէս թագաւորական թագի կապ, Արշակունիների խոյրի ժապաւէն, որ ետեւի կողմից կապ կազմելով, երկու ծայրերով կախում է ցած (հմմտ. Տիգրան Բ.ի խոյրի հետ)⁵²:

Այսպիսով, պատմիչի հաղորդումներից երեւում է, որ սպարապետ Մանուէլին տրուած էին թագաւորական պատիւներ: Անշուշտ այդ տրուած էր նրան գահի տեղապահ եւ երկրի փաստացի կառավարիչ ճանաչելու պատճառով:

Պատիւներից զարգմանակը զարդարուած էր արծուի նշանով: Արծուանշան ունէր նաեւ սպարապետին սպարգեւած վրանը:

Փաւստոս Բուզանդի մէջբերուած հաղորդումը հիմք է տալիս նախնական եզրակացութեան համար:

Զարմանդուխտ թագուհին եւ նրա թագածառանգ որդիները

50 ՄԱԼԽԱՍԵԱՆ ՍՏ., Հայերէն բացատրական բառարան, հտ. Ա., Երեւան, 1944, էջ 414: ԱՃԱՌԵԱՆ ՀՐ., Հայերէն արմատական բառարան, հտ. Ա., Երեւան, 1971, էջ 521: Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հտ. Ա., էջ 530: ՀԱՑՈՒՆԻ Վ., Պատմութիւն հին հայ տարազին, էջ 106:

51 ԱՃԱՌԵԱՆ ՀՐ., նշ. աշխ., էջ 234, ՀԱՑՈՒՆԻ Վ., նշ. աշխ., էջ 100: Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հտ. Ա., էջ 176:

52 ԱՃԱՌԵԱՆ ՀՐ., նշ. աշխ., էջ 217, ՀԱՑՈՒՆԻ Վ., նշ. աշխ., էջ 96:

Թէ Արտաշէսեանները արքայական իշխանութեան օրինական ժառանգորդի խորհրդանիշ, այդ հարցերին այսօր միանշանակ պատասխանելը դժուար է:

Արշակունեաց շրջանի պատմամշակութային յուշարձաններում, հեթանոսական թէ քրիստոնէական, այդ թւում եւ Աղցում նրանց արքայական դամբարանի պատկերաքանդակներում, Արշակունիների զինանշանը առ այժմ չի յայտնաբերուել:

Պէտք է նկատի ունենալ, որ միջին դարերում արծուի օգտագործումը զինանշանում կայսրութիւնների արտօնութիւնն էր: Այդ աւանդոյթը գալիս է Հռոմէական կայսրութիւնից, ուր արծուակիր գաւազանը կայսեր նշանն էր: Հին Հռոմի կործանումից յետոյ նոր առաջ եկած պետութիւններն ու կայսրութիւնները որպէս գլխաւոր խորհրդանիշ օգտագործեցին արծուապատկերը, ապացուցելու Հին Հռոմի եւ նրա կայսրերի հետ իրենց ծագումնաբանական կապը⁵⁶:

Նոյնը կարող էր տեղի ունենալ նաեւ Հայաստանում:

Արշակունիների դրամների կամ թագաւորական սաղաւարտի արծիւները կարող էին խորհրդանշել նրանց օրինական-ժառանգական իրաւունքը իրենց ձեռքը վերցնելու Արտաշէսեանների կողմից բաց թողած թագաւորական իշխանութիւնը:

Բայց միաժամանակ, արծիւը կարող էր նաեւ մտնել Արշակունեաց զինանշանի յօրինուածք որպէս բաղադրամաս: Քանի դեռ չկայ (կամ չի գտնուած) գրաւոր վկայութիւն Արշակունիների զինանշանի վերաբերեալ (ինչպիսին է Փաւստոս Բուզանդի տուած նկարագրութիւնը Մամիկոնեանների նշանի մասին) եւ չի գտնուած նրանց նշանի պատկերաքանդակը պատմամշակութային յուշարձաններում, Արշակունիների զինանշանի որոնումները շարունակելի են:

4. ԱՂՅԻ ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ ԱՐՔԱՅԱԿԱՆ ԴԱՄԲԱՐԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ ՊԱՏԿԵՐԱՔԱՆԴԱԿՆԵՐԸ

Միջնադարեան տոհմական դամբարանները, որտեղ ամփոփուած են իշխանական կամ արքայական տոհմի անդամների աճիւնները, ոչ միայն տոհմական սրբավայրեր են եւ պատմական յիշողու-

56 В. Похлевкин, Международная символика и эмблематика. Опыт словаря, М., 1989, с. 153, 154

թիւն, այլեւ մեծարժէք պատմա-մշակութային եւ տոհմական-ծագումնաբանական ամենավստահելի նիւթական վկայութիւն-յուշարձան:

ԺԱ-ԺԴ. դդ. մեզ հասել են շատ տոհմական դամբարաններ Զաքարեանների (Սանահին), Կիւրիկեանների (Հաղպատ, Ն. Վարդավանք), Օրբէլեանների (Նորավանք, Վայոց ձոր), Մամիկոնեանների Դսեղ, Բարձրաքաչ վանք), Պահլաւունիների (Մարմաչէն) եւ այլ:

Վաղ միջնադարից տոհմական դամբարանների թիւը շատ աւելի սակաւ է, նրանց թւում ամենանշանաւորն է Աշտարակի մօտ գըտնուող Հնագոյն Աղց գիւղի Արշակունիների արքայական դամբարանը:

Նախաքրիստոնէական (հեթանոսութեան) շրջանում Արշակունի թագաւորների գերեզմանատունը գտնուում էր Դարանադեաց գաւառի Անի ամրոցում (Բարձր Հայք): Նրանց դամբարանը մնաց Անիում նաեւ քրիստոնէական շրջանում: Սակայն 360-ական թթ. պարսից Շապուհ արքայի աւերիչ արշաւանքների ժամանակ կողոպտուեց նաեւ Անին: Պարսիկները հայ թագաւորների ոսկորները մտադիր էին տանել Պարսկաստան, բայց սպարապետ Վասակ Մամիկոնեանը պարտութեան մատնեց պարսից զօրքը եւ խլեց ոսկորները: Փրկուած մասունքների համար 364 թ. կառուցուեց նոր դամբարան Աղց գիւղում, որ գտնուում էր Արագած լեցուան նեղ եւ դժուարամուտ խորշերից մէկում⁵⁷: Դամբարանը եղել է երկյարկանի, սակայն վերին յարկը չի պահպանուել, պահպանուած ներքին յարկում դամբարանը ունի երկու խորշ (հիւսիսային եւ հարաւային պատերի կենտրոններում), ուր ամփոփուած են եղել արեւահայկերէն ոսկորները: Խորշերի առջեւ դրուած են երկուսական սալեր, որոնք ունեն պատկերաքանդակներ:

Աղցի քանդակների բովանդակային յորինուածքներն ունեն գուգահեռներ ինչպէս դամբարանին ժամանակակից էջմիածնի Մայր տաճարի, Դ. դ. Քասախի բազիլիկայի, այնպէս էլ ժամանակով շատ հեռու, հազար տարի անց, Զաքարեանների իշխանապետութեան շրջանում կառուցուած վանքերի կամ եկեղեցիների քանդակներում: Այդ նույն կառուցուած վանքերի կամ եկեղեցիների քանդակներում ազնուական գուգահեռները հնարաւորութիւն են տալիս հետեւելու ազնուական տոհմերի գոյատեւման եւ հին խորհրդանշան յորինուածքների փոխանցուելուն դարաշրջանից դարաշրջան:

57 ՓԱԽՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴ, Հայոց պատմութիւն, էջ 223, 225,

ա. Աղց-էջմիածին

Էջմիածնի Մայր տաճարի հիւսիսային ճակատում, սալի վրայ, քանդակուած է խաչ շրջագծի մէջ, շրջագծից դուրս, նրա երկու կողմերից թուռններ են, աւելի ստոյգ աղանիներ: Սալի վրայ եւ շրջագծի մէջ փորագրուած է արձանագրութիւն-աղօթք յունարէն լեզուով (նկ. 14): Քանդակները, ինչպէս նշուած է մասնագիտական գրականութեան մէջ, տաճարի վրայ պահպանուած հնագոյն քարերից են, որոնք մնում են ամենատուչ Ե. դ. վերջին քառորդից, երբ Վահան Մամիկոնեանը վերակառուցեց տաճարը⁵⁸:



Նկար 14 ՀԱՌԹԱՒԱՆՆԻԱԿ ԷՋՄԻՍՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՃԱԿԱՏԻՆ

Աւելացնենք, որ մեր կարծիքով յունալեզու արձանագրութիւնը մատնանշում է, որ քանդակները պատրաստուել են Դ. դ., մինչեւ Հայկական այբուբենի ստեղծումը:

Աղանիների քանդակ ունի նաեւ Աղցի դամբարանը: Այստեղ մուտքի ճախ կողքի քարի վրայ կայ քանդակ ներքեւում երկու կենդանի (ցուլ), նրանցից վեր մի այծեամ, աւելի վերեւ քարը բաժանուած է երկու մասերի, որոնցից մէկը վրայ գտնուած է փոքրագլի

58 ՍՌԱՒԵԼԵԱՆ Բ., Հայկական պատկերաբանականները Դ-է դդ, Երեւան, 1949, էջ 42.

քանդակ կտուցներով իրար մօտեցած երկու թռչուններ⁵⁹:

Ներսի խորշի առջևի սալի վրայ քանդակուած է հաւասարա-
թեւ խաչ շրջագծի մէջ, խաչի հորիզոնական թեւերի վրայ թռչուն-
ներ (աղաւնիներ), թեւերից ներքեւ քանդակուած են վարդեր (նկ. 14ա):

Ակնյայտ է էջմիածնի եւ Աղցի նշուած քանդակների հարա-
զատութիւնը եւ գաղափարական ընդհանրութիւնը: Սակայն, մեր
կարծիքով, Աղցի քանդակը ներկայացնում է խորհրդանիշի նախ-
նական ձեւը, իսկ էջմիածնի օրինակում այն կրել է զարգացման
առաջին փուլը: Այստեղ աղաւնիները դուրս են բերուել շրջանա-
կից եւ տեղադրուել նրա
երկու կողմերից:



Նկար 14ա ԱՅԻ ԴԱՄԲԱՐԱՆԻ ՀԱՐԹԱՔԱՆԴԱԿ

Այս քանդակը սովոր-
ական զարդաքանդակ
չէ, այն պաշտօնական
խորհրդանիշ պատկեր է
եւ աւելի ուշ Բագրա-
տունեաց շրջանում ո-
րոշ ձեւափոխութիւննե-
րով կազմել է պետա-
կան զինանշանի յորի-
նուածքի հիմքը: Այդ-
պիսին է, պետական զի-
նանշանը Անիում, բաղ-
կացած երեք մասից. յո-
վազ շրջանակի մէջ, օղակ
եւ խաչ: Անիի յորինուած-
քում խաչը հանուած է

շրջագիծ եւ տեղադրուած նրա վրայ, իսկ արձանագրութեան համար
պատրաստուած շրջանակի տեղը զբաղեցրել է յովազի քանդակը⁶⁰:

Հին կաղապարի նոր տարբերակ է ԺԱ. դ. Հաւուց թառ վան-
քում կանգնեցրած խաչքարի քանդակը: Այդ ժամանակ վանքը պատ-
կանել է Պահլաւունիներին, խաչքարի արձանագրութեան մէջ (1081 թ.)
միջուկ է Սմբատի որդի Հասանը (անշուշտ Պահլաւունի), իսկ քան-
դակը եռանդամ է խաչը յենուած է օղակի վրայ, որի ներսում վարդեակ

59 Նոյն, էջ 29:

60 Տե՛ս Հայկական գիմնաշաններ, մաս Ա, Երեւան, 1994, էջ 72, նկ. 73:

է, իսկ օղակի կողմերից երկու աղանձներ⁶¹ (նկ. 14բ): Պաշտօնական բնոյթ ունի նաեւ Սանահնում Ձաքարեանների տոհմական դամբարանը քանդակը (ԺԳ. դ), (նկ. 14գ):


բ. Աղց-Քասախ

Պատմա-խորհրդանիշ տոհմաձագուճնաբանական մեծ արժէք են ներկայացնում Քասախի բազիլիկայի քանդակները: Բազիլիկան կառուցուել է Դ. դ.⁶², այն միջնադարեան հնագոյն շինութիւններից մէկն է եւ նրա քանդակները աչքի են ընկնում հնուլթեամբ: Նրա արեւմտեան գլխաւոր շքամուտքի բարաւորի վրայ քանդակուած է խաղողի



Նկար 14բ

ՀԱՒՈՒՑ ԹՎՈՒՄ ԽԱԶԻՍԱՐԸ



Նկար 14գ ՁԱՔԱՐԵԱՆՆԵՐԻ ՏՈՀՄԱԿԱՆ ԴԱՄԲԱՐԱՆԻ ՔԱՆԴԱԿԸ

61 Տե՛ս նաեւ ԳԱՐԵԳՈՒՆ ՅՈՎԱԷՓԵԱՆ, Նիւր. եւ ուսումնասիր. հայ արուեստ. պատմ., հտ. բ., Երեւան, 1987, էջ 17, նկ. 3:

62 ՍԱՀՆԻՆԵԱՆ Ա., Քասախի բազիլիկայի նարտարապետութիւնը, Երեւան, 1955, էջ 188:



Նկար 15 ԲԱՍԱԽԻ ԲԱԶԻԼԻԿԱՅԻ ԱՐԵՆՄՏԵԱՆ ՄՈՒՏՔԻ ԲԱՐԱԽՈՐԻ ՔԱՆՂԱԿԸ

որթ, կենտրոնում խաչ, որի ճիւղերից կազմուած շրջանակի մէջ եւ խաչից աջ ու ձախ, դէմ-դիմաց կանգնած են եղջերուներ, իսկ նրանց ետեւում քանդակուած են փոքրիկ արմաւենիներ (նկ. 15):

Նման եղջերուներ հանդիպում են նաեւ Աղցի դամբարանի մուտքի վրայ դրսից: Այստեղ պատկերուած է եղջերուների շարք, որոնք երկու կողմից շարժուած են դէպի կենտրոնի հաւասարակողմ խաչը: Քասախի քանդակը իր արուեստով, կատարման վարպետութեամբ ժամանակակից է կամ միայն տասնեակ տարիներով է հեռու Աղցի քանդակներից⁶³:

Բազիլիկայի Հարաւային մուտքի բարաւորի վրայ կայ քանդակապատկեր խաչ, նրա վերին թելից աջ ու ձախ դէմ-դիմաց կանգնած են երկու կենդանիներ, գիշատիչներ, որոնց ոտքերի տակ մի հրապարակ է մնում, որ յիշեցնում է կենդանածեւը (նկ. 16): Բ. Առա-



Նկար 16 ԲԱՍԱԽԻ ԲԱԶԻԼԻԿԱՅԻ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՄՈՒՏՔԻ ԲԱՐԱԽՈՐԻ ՔԱՆՂԱԿԸ

⁶³ ԱՌԱՔԵԼԵԱՆ Բ., նշ. աշխ., էջ 84, ԱԶԱՐԵԱՆ Լ., վաղ միջնադարեան հայկական քանդակը, Երեւան, 1975, էջ 40, 88: ՍԱՀԻՆԵԱՆ Ա., նշ. աշխ., էջ 188:



Նկար 16ա2



Նկար 16ա1

ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԾՐՋԱՆԻ ՔԱՐԷ ԿՆԻՔՆԵՐ

քելեանի կարծիքով, եթէ դա կենդանիների կանգնելու համար պայմանականորէն արուած գետին չէ, ապա պէտք է համարել կենդանիների ստուերները քանդակելու առաջին փորձը:

Յօրինուածքի կենտրոնը խաչն է: Հարաւային զարդաքանդակը հիմնանիւթով եւ յօրինուածքով նման է՝ արեւմտեան քանդակին, միայն եղջերունիների փոխարէն պատկերուած են այլ կենդանիներ⁶⁴:

Նմանատիպ պատկեր ունի հելլենիստական շրջանի քարէ կնիքը⁶⁵ (նկ. 16ա2): Գիշատիչի ոտքերի տակ մեր կարծիքով ոչ թէ ստուեր է, այլ զոհ կենդանին, որին յօշոտում է գիշատիչը: Այս կնիքը (գեմման) եւ Քասախի քանդակը ունեն ընդհանուր խորհրդանիշ եւ ամենայն հաւանականութեամբ պատկանում են մի ազնուական տոհմի, որ հին շրջանից գոյատեւել է մինչեւ Դ. դ.: Քասախի բազիլիկայի նշուած երկու քանդակապատկերները անշուշտ խորհրդանիշ բնոյթ ունեն, նրանք վաղ միջնադարի հայկական աւատապետական տներից երկուսի զինանշաններն են, բայց նրանց տոհմական պատկանելիութիւնը առ այժմ չի որոշուում: Այդ տոհմերից առ նուազն մէկը մասնակից է եղել Աղցի դամբարանի կառուցմանը, ինչի մասին վկայում են խորհրդանիշ քանդակների նմանութիւնը:

64 Ա.ՌԱՔԵԼԵԱՆ Բ, նշ. աշխ., էջ 84, ՍԱՀԻՆԵԱՆ Ա., նշ. աշխ., էջ 187:

65 Տե՛ս Ա.ՌԱՔԵԼԵԱՆ Բ, Ակնարկներ Հին Հայաստանի արուեստի պատմութեան, տախտակ 49:

գ. Աղց - Մակարավանք - Նոր Վարագավանք

Աղցի դամբարանի մուտքի քարի վրայ քանդակուած են վզերով իրար փաթաթուած երկու կուռնկներ, քանդակը չափազանց նախնական տեսք ունի⁶⁶:

Վզերով փաթաթուած կուռնկների քանդակներ նորից երեւան են գալիս մօտ հազար տարի անց, ժԳ. դ. Մակարավանքի Գլխաւոր եկեղեցու բեմի քանդակներում (եկեղեցին կառուցուել է 1205 թ.) եւ Նոր Վարագավանքի Աստուածածին (վանքի գլխաւոր) եկեղեցու շքամուտքի քանդակներում (կառուցուել է 1224-1237 թթ.) (տե՛ս Հայկ. զին. մաս Ա., նկ. 37, Ջաքարեանների երկմարմին սիրին զինանշանից աջ): Նոյնատիպ քանդակ այս համալիրում կար աւելի վաղ, 1198 թ. Դաւիթ Կիւրիկեան իշխանի կառուցած Ս. Նշան եկեղեցու մօտ:

դ. Աղց - Արտաշէսեաններ


Աղցի դամբարանի մուտքի կողքի վրայ, ներքեւում, քանդակուած է առիւծ, որն առջեւի թաթերով յենում է եղջերուի ուսերին, իսկ ետեւի թաթերով եղջերուի կոնքերին, գլուխը մարմնի համեմատ վերեւ, խրոխտ կեցուածքով կանգնած: Քարի կենտրոնում քանդակուած է խաչ շրջանակի մէջ, ոտից վերեւ մի այծեամ (վայրի այծ) մեծ եղջիրներով⁶⁷: Սա մի ամբողջական յօշոտում է, որի բաղադրիչները տեղադրուած են ոչ թէ հորիզոնական, այլ ուղղահայեաց կարգով:

Այս քանդակին մոտիւով մօտ են հելլենիստական շրջանի որոշ քարէ կնիքների խորհրդանիշ պատկերները: Նրանցում առիւծը եւ մէկ այլ գիշատիչ յօշոտում են ընկած գոհին (հաւանաբար եղնիկին) (նկ. 16ա1):

Աղցից Հազար տարի անց այդ նոյն պատկերը կրկնում է Եղվարդի Ս. Աստուածածին եկեղեցու արեւելեան ճակատի պատկերաքանդակում (նկ. 42): Որոշակի վերապահումով մենք այն համարել էինք Արշակունիների զինանշան (տե՛ս Հայկ. զինանշաններ, մաս Ա. էջ 64): Մակայն վերը շարադրած նիւթը չի հաստատում այդ վարկածը, բայց հիմք է տալիս եզրակացնելու, որ առիւծ-եղնիկ գոյգը եղել է Արտաշէսեան շրջանի ազնուական տոհմերից մէկի խորհրդանշան-զինանշանը, եւ որ այդ տոհմի շառաւիղը գոյա-

⁶⁶ Ա.Ռ.Ա.ՔԵԼԵԱՆ Բ., Հայկական պատկերաբանագիտութիւնը Դ-է դդ, Երեւան, 1949, էջ 84.

⁶⁷ Նոյն, էջ 29.



Նկար 42

ԵՂՎԱՐԴԻ Ս. ԱՍՏՈՒՍԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ
ԱՐԵՆՄՏԵԱՆ ՃԱԿԱՏԻ ՀԱՐԹԱՔԱՆԳԱԿԸ

տեւել է մինչեւ ժԳ. դ.:

Աղցի քանդակների պատմա-խորհրդանիշ արժէքը պէտք է գնահատել երկու տեսանկիւնից:

Նախ՝ նրանց դերը Արշակունիների տոհմական զինանշանը որոշելու համար: Այդ հարցը բարդանում է նրանով, որ քանդակների թւում չկայ այնպիսին, որ դամբարանի քանդակների շարքում գերիշխող դերք վրաւի եւ ընդգծի նրա առաջնութիւնը միւսներին համեմատ:

Այդպիսին, թերեւս, եղել է դամբարանի երկրորդ յարկում շքամուտքի բարաւորին կամ յարկի ճակատին: Բայց վերնաշարկի

բացակայութեան պատճառով այդ հարցը մնում է բաց:

Եղած քանդակներից երկուսը հաւանականութիւն ունեն լինելու տոհմի նշան՝ առիւծը, որ յարձակուել է եղջերուի վրայ (մուտքի քանդակ դրսից):

Երկրորդ՝ շրջանակի մէջ ամփոփուած բարդ յորինուածքը Խաչը աղաւնիների եւ վարդեակների հետ: Այս յորինուածքը անկասկած խորհրդանիշ բնոյթ ունի եւ ըստ երեւոյթիւն խորհրդանշում է դարաշրջանի գաղափարը: Պատահական չէ նրա առկայութիւնը թէ արքայական դամբարանում եւ հոգեւոր բարձրագոյն աստիճանի կառոյցում (Մայր տաճար):

Ընդ որում, մեր կարծիքով, Աղցի, առանձնապէս էջմիածնի աւելի աւարտուն օրինակում, զգացւում է Արտաշէսեան պետական նշանների ազդեցութիւնը: Տիգրանի եւ Արտաւազդի օրօք պետական խորհրդանիշ պատկերն էր գոյգ արծիւներ եւ նրանց միջեւ արեւը (պաշտամունքի առարկան):

Մայր տաճարի պատկերանշանը կազմուած է նոյն սկզբունքով զոյգ աղաւնիներ եւ նրանց միջեւ պաշտամունքային առարկան Խաչը, որ քրիստոնէական կրօնում որպէս պաշտամունքի բարձրագոյն խորհրդանիշ փոխարինել էր արեւին: Զգացւում է աւանդոյթի ազդեցութիւնը: Աւանդոյթը քրիստոնէայ Արշակունիներին կարող էր անցնել հեթանոս Արշակունիներից, իսկ վերջիները այն ընդօրինակել էին Արտաշէսեաններից, համարելով իրենց Տիգրանի արքայատոհմի ժառանգորդներ:

Վերջում աւելացնենք եւս մէկ փաստ:

Կայ պատմական բնոյթի մի նմոյշ, որը կարող է նպաստել Հարցի պարզաբանմանը դա հռոմէական դրամ է, թողարկուած Բ. դ.: Այդ շրջանում շարունակուած էր Պարթեւաստանի եւ Հռոմի պայքարը արեւելքում, հայկական դահլ գրաւում էին մերթ Հռոմի դրածոները, մերթ Արշակունիների ներկայացուցիչները, 163 թ. հռոմէական լեզանները մտել էին Հայաստան, գրաւել եւ կործանել Արտաշատը, դահլ երկրորդ անգամ անցաւ Հռոմի դրածոյ Սոհեմոսին (164-186): Լուկիոս Վերոս (161-169) եւ Մարկոս Աւրելիոս (161-180) գահակից կայսրերը կոչուեցին Armeniacus (Հայաստանի յաղթող), այդ անուանակոչումը գրուած է նրանց թողարկած որոշ դրամների վրայ:

Յաղթանակի կապակցութեամբ Հռոմում թողարկուեց դրամ, որի Բ երեսին պատկերուած է Հայաստանի խորհրդանիշը՝ գետնին

նստած կին, ծնօտով յենևում է աջ ձեռքին (միջին դարում՝ Մայր Հայրաստան պատկերի նախատիպ): Նրանից ձախ դրուած են աղեղ եւ կապարճ, իսկ աջից, ինչպէս ճիշտ նկատել է Չ. Պտուկեանը՝ զինանշան (դրուած ձողի վրայ): Պատկերի ներքեւում գրուած է ARMEN(IA)*



Նկար 16ա

ՀՌՈՄԷԱԿԱՆ ԴՐԱՄ՝ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԽՈՐՀՐԴԱՆՇՈՂ ՊԱՏԿԵՐՈՎ

(նկ. 13ա): Չ. Պտուկեանը նշանը չի մեկնաբանում, այնինչ ձողի վրայ նստած է արծիւ ճանկերում աղեղ: Երկրի խորհրդանշանի հետ յարմար էր դնել նաեւ նրա պետական նշանը (զինանշանը), այդ տեսանկիւնից բացառուած չէ, որ տուեալ դէպքում գործ ունենք Արշակունիների զինանշանի հետ, բայց ոչ մեծի, այլ փոքրի:

Շար. 1

ՌԱՖԱՅԷԼ ՄԱԹԵՒՈՍԵԱՆ

* Դրամի նկարը եւ բացատրութիւնը տե՛ս ՊՏՈՒԿԵԱՆ Զ., Հայաստանի վերաբերեալ հռոմէական դրամներ եւ մեդալիոններ, էջ 91« 92« 158« 187« 188, նկար 403« 597: Տե՛ս նաեւ ՄՈՒՇԵՂԵԱՆ Խ., Դրամական շրջանառութիւնը Հայաստանում, 108-109 էջերի ներդիր նկար:

**Armenian Coats-of-Arms:
The Ardashesyans, The Arshagounis,
Developed Feudalism
(summary)**

Raphael Matevossian

The study of coats-of-arms is considered to be an important subject for historical research. In fact, first and foremost, it is an auxiliary branch of history.

The publication of Armenian Coats-of-Arms (Part I) in 1994 was the result of a long historical research by the author; it dealt with the study of coats-of-arms used by three Armenian aristocratic dynasties, the Bagratounis, Zakarians and Mamikonians, as well as with national Armenian emblems used between the 8th and 13th centuries.

The article examines the coats-of-arms of only those dynasties that were present in the royal Arshakunyats cemetery in Aghts, as well as the relevant sculptures of the 3rd century basilica of Kasakh.

The issue being investigated is of historical (sometimes even legal) significance and representing, in some cases, the main source of information and, in others, as an appendix to different sources. Coats-of-arms and other government concepts provide a subjective and creative reflection on the standards of intra-political relations in a feudal society, the administrative and political structure of the government, the official policies of the government and other related issues. That is why it is essential to investigate the rules and laws by which a society functioned and developed in order to correctly understand the coats-of-arms of any historical period.

The first part of this monograph is dedicated to the coat-of-arms of the Ardashesyans. The second part, instead, studies the coats-of-arms of the period of developed feudalism, including the above-mentioned three dynasties.

Previous and current works do not exhaust the study of the rich heritage of the Armenian coats-of-arms. The symbols and emblems of many Armenian dynasties and clans are yet to be studied. Among other areas, they include those of Vaspourakan, Syunik and Artsakh.